

«Ծովագյուղի ԳԲԿ-
Ճամբարակ»
ստորգետնյա միջին
ճնշման D=300մմ
չգործող գազատարի
ապամոնտաժում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
(լրամշակված)

Ձեռնարկող՝

«Գազարոմ Արմենիա» ՓԲԸ

Նոյեմբեր, 2020թ.

**«Ծովագյուղի ԳԲԿ-Ճամբարակ»
ստորգետնյա միջին ճնշման D=300մմ
չգործող գազատարի ապամոնտաժում**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

(Լրամշակված)

Նախագծի Պատվիրատու/Ձեռնարկող

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Նախագծի հեղինակ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի
«Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ

Նոյեմբեր, 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ.....	7
2.1	Ընդհանուր դրույթներ	7
2.2	ՆԳՀ-ի մշակման նորմատիվաիրավական հիմքը	7
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ և ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	12
3.1	Նախնական գնահատման նպատակը	12
3.2	Նախնական գնահատման մեթոդաբանությունը	12
4.	ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	13
4.1	Ընդհանուր տվյալներ.....	13
4.2	Շինարարական աշխատանքների նախապատրաստում	16
4.3	Հիմնական շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ	17
4.4	Ժամանակավոր շենքեր և շինություններ	17
4.5	Հիմնական աշխատանքներ.....	17
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	19
5.1	Սևան ազգային պարկը.....	19
5.2	Կլիման.....	21
5.3	Ջրագրությունը	24
5.4	Կենսաբազմազանությունը.....	25
5.5	Ձկներ	25
5.6	Երկկենցաղներ.....	27
5.7	Սողուններ.....	27
5.8	Թռչուններ	28
5.9	Կաթնասուններ.....	28
5.10	Երկրաբանական կառուցվածքը, հիդրոերկրաբանական ու սեյսմիկ պայմանները.....	29

5.11 Լանդշաֆտը	31
6. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	33
6.1 Գեղարքունիքի մարզը	33
6.2 Ազդակիր համայնքը.....	34
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	35
7.1 Բնապահպանական ազդեցությունները շինարարության փուլում	35
7.2 Սոցիալական ազդեցությունները շինարարության փուլում	38
8. ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	40
8.1 Բնապահպանական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում	40
8.2 Սոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում.....	42
Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ.....	45
Հավելված 2. Մշտադիտարկման պլան.....	53
Հավելված 3. Հանրային քննարկումների հայտարարություն, արձանագրություն և մասնակիցների ցանկ	56
Հավելված 4. ՏԻՄ նախնական համաձայնության գրություն.....	61
Հավելված 5. Տարածքի իրադրային սխեմա.....	62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերության
ՆԳՀ	Նախնական գնահատման հայտ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզում «Ծովագյուղ ԳԲԿ-Ճամբարակ» ստորգետնյա միջին ճնշման ժպ300մմ չգործող գազատարի ապամոնտաժման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը (այսուհետ՝ ՆԳՀ) մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանության ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Հաշվետվությանը ներառում է՝

- ✓ նախատեսվող գործունեության նկարագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների ծավալները, ֆիզիկական ներգործությունների մակարդակը,
- ✓ նախատեսվող գործունեության հնարավոր տարբերակների, այդ թվում նաև հրաժարման (գրոյական) տարբերակի նկարագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը,
- ✓ հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի և բնական պայմանների նկարագիրը, էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունների, ռիսկերի ու օգուտների վերլուծությունը և գնահատումը,
- ✓ հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը, ազդեցության ծավալները, ինչպես նաև նվազեցման, մեղմացման կամ վերացման հնարավորությունները,
- ✓ բացասական ազդեցությունների կանխարգելման, մեղմացման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումների (շինարարության և շահագործման փուլերում) ծրագիրը,
- ✓ նախատեսվող գործունեության, հնարավոր ազդեցությունների, վերլուծությունների և գնահատումների պատկերավոր վկայություններ, մասնավորապես՝ աղյուսակներ, նկարներ, քարտեզներ, գրաֆիկներ, սխեմաներ և այլն:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ և ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1 Ընդհանուր դրույթներ

«Ծովագյուղի ԳԲԿ-Ճամբարակ» ստորգետնյա միջին ճնշման $d_{պ300}$ մ, $L=5060$ գծ.մ չգործող գազատարի ապամոնտաժման աշխատանքների նախաձեռնումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2018թ-ի սեպտեմբերի 27-ի N1018-Լ «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման միջոցառումների 2019թ-ի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» որոշման 2-րդ գլխի 2.3 ենթակետի դրույթի՝ «Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում ջրի տակ մնացած շինությունների և ենթակառուցվածքների մաքրման աշխատանքների իրականացում» պահանջներով:

Վերանորոգման աշխատանքների իրականացման ընդհանուր նպատակն է Սևանա լճի ջրածածկման ենթակա տարածքները մաքրել ենթակառուցվածքներից:

Առաջադրանի պահանջներին համապատասխան պետք է նախագծային աշխատանքների շրջանակներում իրականացվեն երկրաբանական և հիդրոլոգիական հետազոտություններ, որոշել շրջակա միջավայրի վրա ազդեցության ծավալներն ու ըստ անհրաժեշտության իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, հաշվարկել վերանորոգման և շահագործման համար պահանջվող հողերի մակերեսները, պատրաստել և կնքել պայմանագրեր օգտագործվող հողերի սեփականատերերի և վարձակալների հետ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

2.2 ՆԳՀ-ի մշակման նորմատիվաիրավական հիմքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- Նախատեսվող գործունեությունը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ ոլորտների դասակարգվում են "Ա", "Բ" և "Գ" կատեգորիայի՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է "Բ" կատեգորիայի համար նախատեսված ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է "Գ" կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրությային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրությային փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության "Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին" թիվ 1325-Ն որոշմամբ:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.)

Օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի,

կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994 թ, ՀՕ-121)»

Օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով: Դրանցից են՝ ՀՀ կառավարության "Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին" թիվ 259, "Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի թիվ 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի թիվ 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին" թիվ 1973-Ն և "Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանաձև գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշումները:

Թափոնների մասին ՀՀ օրենքը (2004թ.)

Օրենքը սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006 թ.-ի "ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին" թիվ 342-Ն հրամանի համաձայն:

Լիցենզավորման մասին ՀՀ օրենքը (2001թ.)

Օրենքը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Օրենքի հոդված 43-ը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեությունների տեսակների ցանկը: Մասնավորապես, հոդված 43-ի կետ 14-ի (Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ) համաձայն, վտանգավոր թափոնների գործածությունն ոլորտը ենթակա է լիցենզավորման, ինչը կարգավորվում է ՀՀ կառավարության 30.01.2003թ-ի "Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին" թիվ 121-Ն որոշմամբ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը (2006թ.)

Օրենքը կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային,

գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի): Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

«Բուսական աշխարհի մասին» (1999թ.) և «Կենդանական աշխարհի մասին» (2000թ.) ՀՀ օրենքները

ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին թիվ 71-Ն և ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ-ի որոշումները

Որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

ՀՀ Գեղարունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին թիվ 80-Ն, 09/01/2003թ. որոշման մեջ ներկայացված է ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների վրա ազդեցության վնասի գնահատումն իրականացվում է՝

- ՀՀ կառավարության «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1110-Ն որոշմամբ:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը (2001 թ.) կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Օրենքը սահմանում է Սևանա լճի էկոլոգիական գոտևորումը, էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման բնագավառում պետական քաղաքականությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցության նորմավորումը և վերահսկողությունը, Սևանա լճի պահպանության համակարգը և փորձագիտական հանձնաժառովի գործունեությունը:

ՀՀ կառավարության 18.01.2007 թ.-ի թիվ 205-Ն որոշմամբ հաստատվել է «Սևան ազգային պարկի» 2007-2011թթ. Կառավարման պլանը, որն առաջնահերթորեն նպատակաուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կառավարմանն ու կենսառեսուրսների կայուն վերարտադրության բարելավմանը: Կառավարման պլանում նկարագրված են «Սևան ազգային պարկի» բնակլիմայական պայմանները, սահմանները, տարածքագործառնական գոտիները, հարակից համայնքների սոցիալ-տնտեսական բնութագիրը և շահագրգիռ կողմերի հետ պարկի մասնակցային կառավարման գործողությունների պլանը, ջրային և ցամաքային էկոհամակարգերը, ջրային կենսաբազմազանությունը, ԱՊ-ի տարածքում տուրիզմի և ռեկրացիոն առանձնահատկությունները, գույքագրված բնական և մշակութային հուշարձանները և այլն:

«Սևան» ԱՊ-ի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

ՀՀ կառավարության 30.05.2002 թ.-ի «Սևան ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 927-Ն որոշման համաձայն, ռեկրեացիոն և տնտեսական գոտու վարձակալված տարածքներում քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

Քանի որ այս նախագծով նախատեսված ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են «Սևան ազգային պարկի տարածքում», այն կդասակարգվի «Բ» կատեգորիայի:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Նախնական գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, նվազեցմանը և/կամ մեղմացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները, ինչպես նաև հաշվարկել շրջակա միջավայրին հասցված հնարավոր տնտեսական վնասի չափը:

3.2 Նախնական գնահատման մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության ՆԳՀ-ի մշակումն իրականացվել է ազգային բնապահպանական և բնօգտագործման օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև կիրառելի լավագույն միջազգային փորձի, բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան:

Նախնական գնահատման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- ✓ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի կողմից մշակված աշխատանքային նախագիծը,
- ✓ Նախատեսվող գործունեության տարածաշրջան այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- ✓ Տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ✓ Նախագծի շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ բանակցությունները և քննարկումները:

4. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Ընդհանուր տվյալներ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղի պատրաստած նախագծով նախատեսվում է «Ծովագյուղի ԳԲԿ – Ճամբարակ» ստորգետնյա միջին ճնշման ձգ300մմ չզործող գազատարի ապամոնտաժում: Ապամոնտաժման ենթակա գազատարը, որի ընդհանուր երկարությունը 5060մ է, բաղկացած է 4 հատվածից:

Հատված I (Լաստչկա ՀԳ) – L=336.0մ


Հատված II (Փոքրիկ Անի ՀԳ) – L=813.0մ

Հատված III (մասնավոր տարածք) L=1246.0մ


Հատված IV (հուշարձան աղբյուրի տարածք, 2 հատվածով) – հատված 4-1 - L=1265.0մ, հատված 4-2 - L=1400.0մ

Նախագծային փաստաթղթի ամբողջական տարբերակը 1-ին հանրային քննարկումներից հետո համաձայն ՊՈԱԿ-ի ներկայացուցչի խնդրանքի, էլ-փոստի գրությամբ 2020թ-ի օգոստոսի 6-ին ուղարկվել, իսկ սեպտեմբերի 29-ին վերաուղարկվել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին՝ մանրամասը դիտարկելու և հնարավոր վարձակալներին իդենտիֆիկացնելու նպատակով: Վերոհիշյալ էլ-փոստի գրությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ստացվել: Վարձակալների վերաբերյալ տվյալները ակնկալվում է ստանալ «Սևան» ազգային պարկից, քանի որ այլ կերպ այդ վարձակալներին իդենտիֆիկացնել հնարավոր չէ: Ակնկալվող տեղեկատվությունը ստանալուց հետո վարձակալների հետ կքննարկվի ծրագիրը՝ համաձայնություններ ձեռք բերելու նպատակով:


Նկար 1. Գազատարի սխեմատիկ ուղեգիծն ըստ հատվածների
Հատված 1




Հատված 2




Հատված 3



Հատված 4-1



Հատված 4-2



Առաջին հատվածն անցնում է ազատ տարածքով և աշխատանքներն իրականացնելու համար խոչընդոտներ չկան: Երկրորդ, երրորդ և չորրորդ հատվածներն անցնում են մասնավոր տարածքներով (հնարավոր է ապամոնտաժել), փակ կառուցապատված շինությունների և հանգստյան գոտիների տարածքներով (առկա են խոչընդոտներ և նեղվածքային պայմաններ ապամոնտաժման համար), թփերի, փշարմավի և ծառերի տարածքներով (առկա են խոչընդոտներ և նեղվածքային պայմաններ ապամոնտաժման համար):

Գազատարի ուղեգծին զուգահեռ անցնում է 35կՎ բարձրավոլտ օդային էլեկտրագիծ: Այս հատվածներում աշխատանքները կիրականացվեն անվտանգության կանոններին համապատասխան:

Աղյուսակ 1. Տարածքի բնութագիրն ըստ հատվածների

№	Տարածքի բնութագիրը	Հատված-1, մ	Հատված-2, մ	Հատված-3, մ	Հատված-4, մ	Ընդամենը, մ
1	Մասնավոր բաց հանգստի գոտի, հնարավոր է ապամոնտաժել	336	401	878	2103	3718
2	Փակ, պարսպապատված տարածքներ, կառուցապատված շինություններով՝ հանգստյան գոտիներ		372	214	170	756
3	Թփերով, ծառերով տարածքներ		40	154	392	586
4	Ընդամենը	336	813	1246	2665	5060

4.2 Շինարարական աշխատանքների նախապատրաստում

Միջին ճնշման ստորգետնյա գազատարի մեկուսիչ ծածկույթի վերանորոգման համար նախագծով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- Խրամուղու քանդում
- Խողովակի ապամոնտաժում
- Խրամուղու հետլիցք
- Տարածքի տոփանում մեխանիզմով

Աշխատանքները կիրականացվեն ընդունված շինարարական մեթոդներով: Հիմնական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կատարել համալիր նախապատրաստական աշխատանքներ, որոնք կապահովեն աշխատանքները ժամանակին իրականացնելու հնարավորությունը:

Նախապատրաստական ժամանակահատվածի աշխատանքներն են՝

- Աշխատանքային տեղամասի մատակարարում շինարարական տեխնիկայով, սարքավորումներով, շինանյութով,
- Բեռնաթափման աշխատանքների կազմակերպում,
- Աշխատանքային տեղամասում գոյություն ունեցող ստորգետնյա հաղորդակցուղիների հայտնաբերում:

4.3 Հիմնական շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ

Շինանյութերի մատակարարումը շինհրապարակ կիրականացվի գոյություն ունեցող ավտոճանապարհներով գազատարի ուղեգծի երկայնքով: Հիմնական մեքենաների, մեխանիզմների և փոխադրամիջոցների տեսակը և քանակը որոշվում է շինմոնտաժային աշխատանքներին, ֆիզիկական ծավալներին, շինանյութերի քաշին և շինարարության կազմակերպման ընդունված մեթոդներին համապատասխան: Ոչ աշխատանքային ժամերին շինարարական մեքենաները և մեխանիզմները կհեռացվեն շինարարական տեղամասերից հատուկ հասկացված տարածք:

Աղյուսակ 2. Հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկ

№	Անվանում	Քանակ
1	Էքսկավատոր 0.5մ ³ շերտի տարողությամբ	1
2	Բուլդոզեր 96կՎտ հզորությամբ	1
3	Կողային ավտոինքնաթափ 10տ բեռնունակությամբ (трыбовоз)	2
4	Ավտոամբարձիչ 6տ բեռնունակությամբ	1
5	Խողովակատեղադրիչներ (трубоукладчик)	2
6	ԴԷԿ - 60	1

4.4 Ժամանակավոր շենքեր և շինություններ

Ապամոնտաժման աշխատանքների տեղամասի հարևանությամբ պետք է տեղակայվի շինհրապարակ վարչական, տնտեսական, սանիտարակենցաղային նպատակներով կիրառվող շինություններով:

Կենցաղային կարիքները հոգալու համար ջրի անհրաժեշտ քանակությունը կբերվի շարժական տարրաներով:

Աղյուսակ 3. Ժամանակավոր շինությունների ցանկ

№	Անվանում
1	Աշխղեկի գրասենյակ
2	Վագոն բանվորների համար (հանդերձարան)
3	Մեկ տեղանոց գուգարան
4	Գործիքների պահեստ
5	Մեխանիկական արհեստանոց
6	Պահեստ (կիսածածկ, փակ)

Շինարարության տևողությունը հաշվարկված է համաձայն շինարարական նորմերի, աշխատանքների ծավալի և աշխատատարության, և կազմում է 4 ամիս:

4.5 Հիմնական աշխատանքներ

Նախապատրաստական աշխատանքներից ավարտից հետո կմեկնարկեն ապամոնտաժման աշխատանքները, որոնք հարկավոր է իրականացնել մինչև Սևանա լճի մակերևույթի 1903.5մ նիշը բարձրանալը:

Հիմնական աշխատանքները ներառում են՝

Հողային աշխատանքներ

Մշակման ենթակա բնահողերը պատկանում են III կարգին: Խրամուղում III կարգի բնահողերի մշակումը կիրականացվի էքսկավատորով և ձեռքով: Հանված բնահողը ժամանակավորապես կկուտակվի գազատարի երկայնքով և կօգտագործվի խրամուղու հետլիցքի համար:

Հետլիցքը կիրականացվի բուլդոզերով, էքսկավատորով և ձեռքով (նեղվածքային պայմաններում): Կիրականացվի հողի մակերևույթի հարթեցում:

Ապամոնտաժման աշխատանքներ

Ապամոնտաժման աշխատանքները կիրականացվեն հետևյալ հերթականությամբ՝

- Եռակցման սարքով կիրականացվի խողովակի հատում կարերի տեղերում: Կտրված խողովակների երկարությունը կազմում է 10-12մ,
- Ապամոնտաժված խողովակները կբարձրվեն ավտոամբարձիչով ավտոհինքնաթափի վրա և կտեղափոխվեն ու կպահեստավորվեն 40կմ հեռավորության վրա: Ապամոնտաժման աշխատանքները կատարելու համար կռունկավարը և մոնտաժողը պետք է համոզված լինեն, որ՝
 - ✓ Ապամոնտաժվող էլեմենտի (խողովակի) քաշը չի գերազանցում ավտոամբարձիչի բեռնունակությունը,
 - ✓ Կտրած խողովակը ամրացվում է նախատեսված բոլոր տեղերից և բարձրացվում է այնպես, որ բացառվի շեղ ձգումը,
 - ✓ Կտրած խողովակը բարձրացնելուց առաջ պետք է համոզվել, որ այն ամբողջությամբ առանձնացված է հիմնական խողովակաշարից,
 - ✓ Խողովակի բարձրացումը պետք է սկսել դեկավարի հրամանով,
 - ✓ Խողովակը նախապես բարձրացվում է 100-200մմ բարձրության վրա, ստուգվում է ամրացման ճշտությունը, որից հետո խողովակն ամբողջությամբ բարձրացվում է:

Ապամոնտաժված խողովակի բարձրացումը կատարվում է հանգիստ, սահուն և առանց ցնցումների:

Աշխատանքները կատարվում են խողովակաշարը գազից ամբողջովին ազատելուց և Պատվիրատուից թույլտվություն ստանալուց հետո: Աշխատանքներն անվտանգ իրականացնելու համար խողովակաշարում մնացած գազի ճնշումը պետ է լինի 100-500Պա:

Եռակցման աշխատանքներ

Եռակցման աշխատանքները կիրականացվեն ՍՆԻՊ III-4-80*, ՎՍՆ 006-89, ՎՍՆ 012-88 նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Եռակցման աշխատանքները կիրականացվեն «Էլեկտրագողողների ատեստավորման կանոնակարգ» փաստաթղթին համապատասխան ատեստավորում անցած մասնագետների ղեկավարության ներքո: Եռակցողները պետք է ատեստավորում անցնեն և վկայական ունենան:

Ատեստավորում չանցած սարքավորումների օգտագործումը եռակցման և մոնտաժային աշխատանքների ժամանակ արգելվում է:

Աշխատանքի անվտանգություն

Աշխատանքների կազմակերպման ընթացքում հաշվի են առնվելու աշխատանքի անվտանգ կազմակերպման նորմատիվային պահանջները, ինչպես նաև աշխատակիցների անվտանգության ապահովման հարցերը: Բոլոր տեխնիկական և տրանսպորտային միջոցները նախքան աշխատանքների մեկնարկը անցնելու են տեխնիկական ստուգում և կարգաբերում: Աշխատակիցները անցնելու են լրացուցիչ տեխնիկական հակիրճ պատրաստվածություն և ստանալու են անհրաժեշտ ցուցումներ աշխատանքի կազմակերպման վերաբերյալ: Շինարարական ճամբարը հագեցած է լինելու առաջին բուժօգնության դեղարկղով: Հաշվի են առնվելու հակահրդեհային միջոցառումների հարցերը և ճամբարում, ինչպես նաև աշխատանքում ներգրավված տրանսպորտային միջոցներում հասնաելի են լինելու կրակմարիչներ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1 Սևան ազգային պարկը

«Սևան» ազգային պարկի տարածագործառնական գոտիները «Սևան» ազգային պարկի տարածագործառնական գոտիներն են՝

1. Արգելոցային
 2. Արգելավայրային
 3. Ռեկրեացիոն
 4. Տնտեսական
- 1) Արգելոցային գոտի

Կառավարման պլանով ստեղծվել է 4 արգելոց, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա: Այդ արգելոցներն են.

ա) «Նորաշենի» արգելոց

Այն զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, ջրայինը՝ 498 հա

բ) «Լիճք-Արգիշի» արգելոց

Զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 482 հա, ջրայինը՝ 693 հա: Ընդգրկում է գոյություն ունեցող «Լիճք» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 600 հա, որից ցամաքայինը՝ 350 հա, ջրայինը՝ 250 հա), ինչպես նաև «Ծակքար», «Լիճք» և «Արգիշի» արգելավայրերի գետաբերանային տարածքները:

գ) «Գիլլի» արգելոց

Տարածքը զբաղեցնում է 1810 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 1325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Ընդգրկում է գոյություն ունեցող «Գիլլի» արգելոցի (1000 հա միայն ցամաքային տարածք) տարածքը

դ) «Արտանիշի» արգելոց

Սևան ազգային պարկի տարածքում այն զբաղեցնում է 3640 հա մակերես, որից ցամաքայինը կազմում է 2142 հա, ջրայինը՝ 1498 հա: Ընդգրկում է ամբողջ «Արտանիշի» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 6420 հա, որից ցամաքայինը՝ 2220 հա, ջրայինը՝ 4200 հա) մեծ մասը:

Գոյություն ունեցող «Կարճադրյուր» (ընդհանուր մակերեսը՝ 3750 հա, որից ցամաքայինը՝ 200 հա, ջրայինը՝ 3550 հա) և «Նորատուս» (ընդհանուր մակերեսը՝ 3600 հա, որից ցամաքայինը՝ 150 հա, ջրայինը՝ 3450 հա) արգելոցային գոտիների տարածքներն ընդգրկվել են «Սևան» ազգային պարկի տնտեսական գոտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ տարիների ընթացքում դրանք, ըստ էության, որպես արգելոցային գոտիներ չեն գործել:

2) Արգելավայրային գոտի

Երկու արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, ջրայինը՝ 293 հա: Այդ արգելավայրերն են.

ա) «Գավառագետ» արգելավայր

Տարածքը զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը - 552 հա, ջրայինը՝ 293 հա: Ընդգրկում է «Գավառագետ» արգելավայրի գետաբերանային և «Նորատուս» արգելոցի (ընդհանուր մակերեսը՝ 3 600 հա, որից ցամաքայինը՝ 150 հա, ջրայինը՝ 3 450 հա) մի մասը:

բ) «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայր

Տարածքը զբաղեցնում է 1807 հա մակերես: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի արգելոցային և արգելավայրային գոտիների տարածքներում թույլատրվում են արգելոցների ճանաչողական զբոսաշրջության երթուղիներում հանգստի տաղավարների և դիտակետերի տեղադրումը, արգելավայրերում էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումները, տարածքի սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության աշխատանքների իրականացումը:

3) Ռեկրեացիոն գոտի

Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը 4753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածք: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, բուսական ու կենդանական տեսակների վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան:

4) Տնտեսական գոտի

Տնտեսական գոտու տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 11266 հա: Վերը բերված տվյալները բերված են ըստ կառավարման պլանի, իսկ ջրի բարձրացման հետևանքով գոտիների և տարածքային հատվածների փոփոխությունները ներկայացված են նախագծով՝ ըստ համապատասխան բաժինների:

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի տնտեսական գոտու տարածքներում թույլատրվում են խախտված էկոհամակարգերի վերականգնման, ինչպես նաև էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող միջոցառումները կազմակերպության կողմից սահմանված վայրերում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արդյունագործական նպատակներով ձկնորսությունը և խեցգետնաորսությունը, կողմնակի անտառօգտագործումը և անտառշահագործումը, այդ թվում՝ հատապտուղների, սերմերի, տնտեսական արժեք ներկայացնող բուսատեսակների, թափուկի հավաքը, խոտի ունձը, ինչպես նաև մեղվապահության նպատակով

տարածքները վարձակալության տրամադրումը, կառավարման պլանում անտառային ֆոնդի գույքագրման տվյալների հիման վրա տարեկան կտրվածքով սանիտարական և խնամքի հատումների հատատեղերի հատկացումը, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման ու վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումները, ինչպես նաև առանձնացված վայրերում՝ տրանսպորտային միջոցների կայանումը և կանգառը, վրանների տեղադրումը և խարույկ վառելը, սիրողական և մարզական ձկնորսությունը:

Ռեկրեացիոն և տնտեսական գոտիների 1905մ բացարձակ նիշից բարձր տարածքներում հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտիավորման նախագծերին և կառուցապատման էսքիզներին համապատասխան: Ռեկրեացիոն և տնտեսական գոտիների վարձակալված տարածքներում քաղաքաշինական գործունեությունը թույլատրվում է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնապահպանական և քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացության դեպքում:

5.2 Կլիման

Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաանպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանի կարող է իջնել մինչև - 36°C: Լճի հակադիր՝ Արեգունու ափին ձմեռը համեմատաբար մեղմ է, նվազագույն ջերմաստիճանը հասնում է - 25°C-ի: Բարձրադիր շրջաններում 0°C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը հասնում է 200-ի, ցածրադիր գոտիներում՝ 260 օր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին (+28°C), նվազագույնը՝ հունվար-փետրվարին: Տարվա միջին ջերմաստիճանը տատանվում է 5-6°C-ի միջև: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրեկան և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75%, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Ռելիեֆի բազմազանությամբ և ջրի հարևանությամբ է պայմանավորված քամիների գերակշռությունը այս տարածքում: Քամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1.5-6.0 մ/վրկ: Ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

Ջրի և ցամաքի հարևանությամբ ու ռելիեֆի բազմազանությամբ է պայմանավորված քամիների գերակշռությունը այս տարածքում: Քամիների միջին տարեկան արագությունը ավազանում տատանվում է 1.5-6.0 մ/վրկ:

Սևանա լճի ջրհավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրհավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված տեղանքի բարձրությունից, ավելանում են տարեկան 400 մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձագագաթային շրջանում)՝ միջինը կազմելով 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ, այդ թվում՝ մայիս-հունիս ամիսներին՝ 115 մմ: Հիմնական գարնանային առավելագույն տեղումներից բացի դիտվում է նաև երկրորդ առավելագույնը՝ աշնանայինը: Տարվա ընթացքում նվազագույն քանակությամբ տեղումներ դիտվում են օգոստոս-սեպտեմբեր և հունվար-դեկտեմբեր ամիսներին:

Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը ձևավորվում է դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

Աղյուսակ 4. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակար դակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Սևան լճային	1917	-5,5	-5,3	-1,9	3,5	8,4	12,4	15,7	15,9	12,8	8,0	2,5	-2,8	5,3	-33	33
Ճամբարակ	1853	-5,1	-3,7	2,1	8,8	13,5	18,0	21,7	21,1	16,7	10,2	3,9	-2,3	8,7	-23	36
Շորժա	1917	-4,6	-4,6	-1,7	4,4	9,4	13,2	16,6	16,9	13,7	8,5	3,1	-1,9	6,1	-32	34

Աղյուսակ 5. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Սևան լճային	74	75	74	71	74	73	73	73	69	68	71	74	72	67	63
Ճամբարակ	68	69	71	69	75	78	80	80	76	74	70	69	73	64	67
Շորժա	68	69	67	63	65	64	63	63	60	62	66	68	65	63	49

Աղյուսակ 6. Մթնոլորտային տեղումները, %

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական /օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ				
	ըստ ամիսների											Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր					Դեկտեմբեր	

Ճամբարակ	22	27	41	57	97	94	65	46	43	52	41	23	608	72	109	99
	17	24	29	48	63	46	61	46	51	45	76	28	76			
Շորժա	12	15	23	42	69	65	49	37	33	40	26	15	426	41	77	68
	12	22	24	38	38	43	44	66	43	38	40	18	66			
Սևան լճային	14	19	28	53	87	76	49	37	33	43	29	16	484	71	121	-
	13	24	33	29	38	51	56	55	35	55	31	16	56			

Աղյուսակ 7. Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների								Աննոսությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-րևմտյան (ՀսԱրմ)					25	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ճամբարակ	81,41	հուն	3	4	5	5	7	40	29	7	74	4,2	2,8	-	24	26	27
			-	-	-	-	-	-	-	-							
		ապր	5	13	12	6	9	32	17	6	70	3,2					
			-	-	-	-	-	-	-	-							
		հուլ	4	40	35	9	4	3	2	3	61	1,6					
			-	-	-	-	-	-	-	-							
հոկտ	5	17	16	9	6	23	16	8	63	2,2							
	-	-	-	-	-	-	-	-									

Աղյուսակ 8. Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունն ըստ ամիսների, ժամ											
	ըստ ամիսների										Տարեկան գումարային	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր		Նոյեմբեր


Սևան լճային	148	148	178	185	245	294	324	311	267	229	161	139	2629
-------------	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	------

5.3 Ջրագրությունը

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ: Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696 կմ²: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը:

Աղյուսակ 9. Ջրային հաշվեկշիռ

Հաշվեկշռի տարրերը	Տարեկան ցուցանիշը (մլն.մ ³)
Մուտք	
Լիճ թափվող գետերով	804.10
Արփա-Սևան թունելով	177.54
Տեղումները լճի մակերևույթի վրա	742.90
Ստորերկրյա հոսք	94.20
Ընդամենը	1818.74
Ելք	
Հրազդան գետով	154.56
Գոլորշիացում ջրի մակերևույթից	1092.80
Ստորերկրյա հոսք	14.40
Ընդամենը	1261.96
Կուտակում	556.78



5.4 Կենսաբազմազանությունը

Սևանա լճի ավազանի բնական մնացորդային անտառները տեղակայված են կենտրոնական գոտուց դուրս՝ զգալի չափով ավելի բարձր նիշերի վրա: Բնական անտառները կազմավորված են եղել հիմնականում գիհու և կաղնու ծառատեսակներից, որոնք և պահպանվել են մինչ օրս: Կենտրոնական գոտում բուսականության հիմնական կանաչ զանգվածներն ունեն արհեստական ծագում՝ դրանք ջրի իջեցման արդյունքում բացված գրունտների վրա տնկարկներ են: Հիմնական անտառկազմող ծառատեսակներն են՝ սոճին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան և այլն: Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը: Տնկարքերի միջին տարիքը կազմում է 37 տարի: Անտառային զանգվածների ջրասուզման պատճառով ակնհայտ է ճահճացման, կենսաբազմազանության էկոլոգիական հաշվեկշռի խախտման և այլ բացասական երևույթների զարգացումը:

Սևանի ավազանի բուսական աշխարհը ներկայացված է մոտ 1600 տեսակի բարձրակարգ բույսերով, որոնց քանակը կազմում է Հայաստանում գրանցված նմանատիպ բույսերի կեսից ավելին, այդ թվում՝ 55 հազվագյուտ ու անհետացող, 20 էնդեմիկ՝ որոնք աճում են միայն Սևանի ավազանում:

Կենդանական աշխարհը նույնպես հարուստ է ու բազմազան: Ողնաշարավոր կենդանիները ներկայացված են 330 տեսակներով, Սևանի իշխանը գրանցված է Կարմիր գրքում: Սևանի ավազանի կենսաբազմազանության պահպանման նպատակով կենտրոնական գոտում առանձնացված են բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ արգելոցներ և արգելավայրեր:

5.5 Ձկներ


Սևանա լիճը հայտնի է իր ձկների էնդեմիկ տեսակներով՝

- Սևանի իշխան (Salmo ischchan)
- Սևանի կողակ (Capoeta capoeta sevagni կամ Varicorhinus capoeta sevangi)


- Սևանի բեղլու (*Barbus goktschaicus*)

Սևանի Իշխան տեսակը ընդունված է բաժանել 4 էկոլոգիական ենթատեսակների՝ ձմեռային բախտակ (*Salmo ischchan ischchan*), ամառային բախտակ (*Salmo ischchan aestivalis*), գեղարքունի (*Salmo ischchan gegarkuni*) ու բոջակ (*Salmo ischchan danilewskii*): Ձմեռային բախտակ և բոջակ ձկնատեսակներն ամբողջովին վերացել են: Իշխանի գեղարքունին և ամառային բախտակ տեսակներն արհեստականորեն աճեցվում են Արարատյան դաշտավայրի ձկնաբուծական տնտեսություններում:

Ամառային բախտակը և Սևանի գեղարքունին, ինչպես նաև Սևանի բեղլուն (*Barbus goktschaicus*) ընդգրկված են Հայաստանի Կարմիր Գրքում:



Սևանի իշխանը (*Salmo ischchan Kessler*) ներկայացված 4 էկոլոգիական ենթատեսակները իրարից տարբերվում էին կենսաբանական և մորֆոլոգիական առանձնահատկություններով: Ձմեռային իշխանը կամ բախտակը (*Salmo ischchan ischchan Kessler*) – լճային ենթատեսակ՝ բազմանում էր աշուն-ձմեռ ժամանակահատվածում: Գեղարքունին (*Salmo ischchan gegarkuni Kessler*) բազմանում է գետերում աշնանը և ձմռանը: Ամառային իշխան կամ բախտակը (*Salmo ischchan aestivalis Fortunatov*) բազմանում է գարնանը և կրկին գետերում, իսկ բոջակը (*Salmo ischchan danilewskii Iakowlev*) լճային գաճաճ տարատեսակն էր, բազմանում էր ձմեռ – վաղ գարուն ժամանակահատվածում: Դրանցից երեքն ի սկզբանե նկարագրվում են որպես առանձին ձկնատեսակներ:



Սևանի կողակը (*Capoeta capoeta sevagni De Filippi, 1865* կամ *Varicorhinus capoeta sevangi*) ներկայացված է լճային և լճա-գետային ձևերով, ինչպես նաև բացառապես գետային ձևով (*Левин и Рыбенян, 2010*): Ըստ որոշ հեղինակների (Գաբրիելյան, 2010) Սևանում հանդիպում է լճի ավազանում: Վերջին տասնամյակում Սևանի կողակի քանակությունը կտրուկ նվազել է: Դրա պատճառներից մեկը այլ ձկնատեսակների բացակայության հետևանքով գերորսն է, ինչպես նաև ներմուծված ձկնատեսակների

միջև մրցակցությունը:

Սևանի բեղլուն (*Barbus goktschaicus Kessler, 1877*) էնդեմիկ ձկնատեսակ է, ունի երեք կենսաբանական ձևեր – լճային, գետային և լճա-գետային, որոնք տարբերվում են իրենց բնակվելու և ձվադրման տեղայնքով: Այս ձկնատեսակն ևս ընդգրկված է Հայաստանի Կարմիր Գրքում:

Գետային իշխանն (*Salmo trutta Linnaeus, 1758*) անցյալում եղել է բավականին տարածված, բնակվում է հիմնականում գետերում և առուներում: Հետագայում առանձնացվել է ալաբալախը որպես Սևանա լճի վտակի (գետ Մաքենիս) առանձին ձկնատեսակ, որը տարբերվում է Սևանի իշխանից և երբևէ չի մտնում լիճ: Գետային իշխանն արձանագրվել է նաև Արգիճի և Մասրիկ գետերում: Հայաստանի այլ ջրամբարներում արձանագրվել է կարմրախայտը (անվանումը պայմանավորված է մարմնի և մեջքի լողակի վրա առկա կարմիր պտերով), օրինակ՝ Ջերմուկից վերև Արփա գետում և Յավ գյուղի տարածքում Յավ գետում (գ. Արաքսի ավազան, ձախ վտակ):

Ծիածանափայլ իշխանը (*Parasalmo mykiss Walbaum, 1972*) բուծվում է Արարատյան հարթավայրի ձկնաբուծարաններում: Հանդիպում է Հրազդան, Մեծամոր, Որոտան (գ. Արաքս ավազան) և Աղստև գետերում (գ. Քուռ ավազան):

Սևանի սպիտակ ձուկը կամ Սևանի սիգր (*Coregonus lavaretus* Linnaeus, 1758) հանդիսանում է Սևանա լճի էկոհամակարգ ներմուծված ձկնատեսակ: Դադիկյանի հետազոտությունների արդյունքում բացահայտված կառուցվածքային տարբերությունների հիման վրա 1986թ ընդունվեց Սևանի սիգի հիբրիդային ծագման վարկածը, համաձայն որի Սևանի սիգն առաջարկվեց առանձնացնել որպես նոր ենթատեսակ՝ *C. Lavaretus sevanicus*:

5.6 Երկկենցաղներ

Երկկենցաղների առատությունը բնորոշ է բոլոր ջրային համակարգերին: Սևանա լճի ավազանում բնակվում են երկկենցաղների 6 տեսակ, այդ թվում

1. Լճագորտ (*Rana ridibunda*) - հանդիպում է ազգային պարկի լճափնյա և մնացորդային լճակների ափամերձ տարածքներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 2800 առանձնյակներ:

2. Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*) - գրանցվել է պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 1400 առանձնյակներ:

3. Կանաչ դոդոշ (*Bufo viridis*) - մեծ քանակությամբ հայտնաբերվել է ամենուրեք: Վերարտադրության ընթացքում մեծ կուտակումներ են առաջացնում լճի և մնացորդային լճակների ափամերձ հատվածներում: Յուրաքանչյուր հեկտարում հաշվարկվել են շուրջ 1600 առանձնյակներ:

4. Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*) - քիչ քանակությամբ հայտնաբերվել է Ծովագյուղ ու Լճաշեն գյուղերին մոտակա եղեգնուտներում և թփուտներում, որը որոշակիորեն համընկնում է ապամոնտաժման աշխատանքների տարածքի հետ:

Առաջին 3 տեսակներով հարուստ տարածքներից են Լճաշենի ջրանցքը մինչև Լճաշենի քարանձավի վերջը, Նորատուսի լճափնյա գոտին, Լիճքը և Ծափաթաղի ձորից սկսած մինչև 2800 մ բարձրությունը:

5.7 Սողուններ



Սևանա լճի ավազանում տարածված են սողունների 16 տեսակ, որոնցից 2-ը գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում՝ խայտաբղետ մողեսիկը (*Eremias arguta transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*):

Սողեսներ՝ հայկական մողես (*Lacerta armeniaca*), սպիտակափոր մողես (*Lacerta unisexualis*), նաիրյան մողես (*Lacerta nairensis*), ռոստոմբեկովի մողես (*Lacerta rostombekovi*), ինչպես նաև կովկասյան ազամա (*Laudakia caucasica*), ճարպիկ մողես (*Lacerta agilis brevicaudata*), բժավոր մողես (*Lacerta strigata*), փոքրասիական մողես (*Parvilacerta parva*), անդրկովկասյան բազմագույն մողեսիկ (*Eremias arguta transcaucasica*), սպիտակափոր մողես (*Darevskia unisexualis*), (*Darevskia valentine*):

Սողեսների այլ տեսակներ, որոնք հայտնաբերվել են պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում, պատկանում են կանաչ մողեսների ընտանիքին, որոնցից ճարպիկ մողեսը առավել խիտ պոպուլյացիաներ է առաջացնում Ծովագյուղ և լճին հարակից անտառներում, իսկ շերտավոր մողեսը՝ Շորժա համայնքի առափնյա տարածքներում, որոնք գազատարի ապամոնտաժման աշխատանքների տարածքն է:



Օձեր՝ ձիթապտղագույն սահնօձ (*Platyceps najadum*), բազմագույն սահնօձ (*Hemorrhais ravergieri*), սովորական սահնօձ (*Coronella austriaca*), հայկական էյրենիս (*Eirenis punctatolineatus*), սովորական լորտու (*Natrix natrix*), ջրային լորտու (*Natrix tessellata*), երևանյան լեռնատափաստանային իժ (*Vipera (Pelias) eriwanensis*), իլիկամողես (*Anguis fragilis*)։

Ընդ որում՝ լորտուներին (*Natrix* genus) պատկանող տեսակները ավելի մեծ քանակությամբ հայտնաբերվել են զարնանը, իսկ լեռնատափաստանային իժը հիմնականում հանդիպում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաների ստորին հատվածներում։

5.8 Թռչուններ



Առավել բազմազան է թռչունների տեսակային կազմը, ընդգրկելով մոտ 267 տեսակ։ *Anser anser*, *Melanitta fusca*, *Netta rufina*, *Aythya ferina*, *Oxyora leucocephala*, *Fulvia atra*, *Ana platyrhynchos*, կարապ *Cygnus cygnus*, *Tadorna tadorna* հանդիպում է Սևանա լճի ավազանում, որոնցից 39 տեսակը գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում, 83 ջրային չվող թռչունները ընդգրկված են Աֆրիկյան-Եվրասիական կոնվենցիայի միգրացիոն վայրի

կենդանիների տեսակների պահպանության համաձայնագրում։



Հայկական որոր (*Larus argentatus armenicus*) Սևանի ավազանի էնդեմիկ չվող տեսակ է, որ կարող է հասնել մինչև 52-62 սմ երկարության և 120-145 սմ թևերի բացվածքով։ Կշռում է մինչև 600-960 գ։ Մարմինը սև է ծավալուն թևերով և փոքր սպիտակ բծերով։ Կտուցը կարճ սև գունավորմամբ։ Առաջին ձմեռող թռչունները հիմնականում շագանակագույն են։ Թաթերի հատվածը սպիտակավուն է, գունատ ստորին և նեղ, կտրված սև գույնի պոչով։

Քաջահավ (*Plegadis falcinellus*) չվող թռչուն է 48-66 սմ երկարությամբ, 80-105 սմ թևերի բացվածքով, մարմնի մինչև 485-970 գ զանգվածով։ Այս տեսակն ունի շագանակագույն ստորին հատված։ Թաթերի մաշկը լինում է մուգ կապույտից մոխրագույն կամ կոբալտե գույնի, և կարմիրից շագանակագույն գունավորումով։



Ֆլամինգո (*Phoenicopterus ruber*) Արաքս գետի և Սևանի ավազանում անցումային տեսակ է, 120-145 սմ երկարությամբ։ Արունները կշռում են միջինը 2.8 կգ, իսկ էգերը միջինը 2.2 կգ։ Թևի ծածկույթը կարող է լինել կարմիր՝ թռիչքի առաջնային և երկրորդային սև փետուրներով։ Կտուցը վարդագույն և սպիտակ սև եզրագծով, ոտքերը՝ վարդագույն։

5.9 Կաթնասուններ

Սևանի ավազանում բնակվում են մոտ 44 տեսակ կաթնասուն, որոնցից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր Գրքում՝ հնդկական վայրենակերպ (*Hystrix indica* Kerr), ջրասամույր (*Lutra lutra*), գորշ արջ (*Ursus arctos*), խայտաքիս (*Vormela peregusna*), անտառակատու (*Felis silvestris* Schreber), բեզուարյան այծ (*Capra aegagrus*)։

Հիմնականում հանդիպում են՝ գայլ (*Canis lupus*), շնագայլ (*Canis aureus* Linnaeus), աղվես, հատկապես կարմիր աղվես (*Vulpes vulpes*), վայրի կատու կամ ընձառյուծ (*Panthera pardus* Linnaeus), նապաստակ (*Lepus europaeus*), աքիս (*Martes foina*), փոքր կրծողներ, մարմառե խայտաքիս (*Vormela peregusna* Guldenstadt), ջրասամույր (*Lutra lutra*), մանուլ, վայրի այծ կամ բեզոարյան այծ (*Capra aegagrus* Erxleben), ափային կզաքիս կամ ջրասամույր (*Lutra lutra* Linnaeus):

Կրծողների դասին պատկանող տեսակները լայնորեն տարածված են Շորժա-Վարդենիս-Գավառ հատվածում՝ կազմելով կիսաշրջան, սկսած առափնյա անմշակ հողակտորներից և ձգվելով մինչև լեռնային գոտիներ, որը որոշ մասերում հասնում է 7-11 կմ-ի, որը որոշակիորեն համընկնում է գազատարի ապամոնտաժման աշխատանքների տարածքի հետ: Վայրենակերպի (*Hystrix hirsutiostri*) բնատեղին սահմանափակ է և զբաղեցնում է Շորժա-Ճամբարակ հատվածի լեռնատափաստանային գոտու անտառփուտները: Այս տեսակը, ինչպես նաև անտառային քնամուկը (*Dryomys nitedula*), նվազում է ոչ միայն պոպուլյացիաների քանակի տեսանկյունից, այլև ընդհանուր քանակի, որն անտառահատումների արդյունք է: Գորշ նապաստակը հայտնաբերվել է պարկի և պահպանական գոտու բոլոր բիոտոպներում և կաթնասուններից առավել հաճախ հանդիպող տեսակներից է:

5.10 Երկրաբանական կառուցվածքը, հիդրոերկրաբանական ու սեյսմիկ պայմանները

Սևանա լճի ավազանն ունի ոչ միայն բարդ գեոմորֆոլոգիական կառուցվածք, այլ նաև բարդ հետերոգեն տեկտոնական կառուցվածք: Սևանի ավազանի ամենահին առաջացումներն են համարվում բյուրեղային թերթաքարերը, որոնք երկրի մակերևույթին մերկանում են Սևանի ավազանից դուրս: Կրաքարերի, կվարցիտների և կավային թերթաքարերի էլքեր են հայտնաբերված Գեղամա լեռնաշղթայի հարավային ծայրամասերում՝ Արգիշի գետի վերին հոսանքներում:

Սևանի և Արեգունու լեռնաշղթաները ներկայացված են հզոր հրաբխանստվածքային ապարներով: Սևանի լեռնաշղթայի կտրվածքում մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա: Փամբակի լեռնաշղթայի արևելյան վերջավորությունը նույնպես կազմված է պորֆիրիտներից և տուֆոգեններից, որոնք Սևան քաղաքի շրջանում ծածկված են նորագույն լավային ծածկոցներով: Նմանատիպ ապարներից է կազմված նաև Վարդենիսի լեռնաշղթայի լավային ծածկոցի հիմքը: Այդ ապարները մերկանում են խոր ձորերի հովիտներում: Պորֆիրիտները և տուֆոբրեկչիաները Գեղամա լեռնաշղթայում ունեն սահմանափակ տարածում, բայց Վարդենիսի լեռնաշղթայում զբաղեցնում են զգալի տարածքներ, տեղ-տեղ հասնելով մինչև ջրբաժաններ: Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի նախալեռնային մասերում մինչև ավամերձ տարածքները զգալի տարածում ունեն նստվածքային առաջացումները՝ կավերը, մերգելները և ավազաքարերը: Վերջիններս ծածկված են տուֆոբրեկչիաների, կոնգլոմերատների և միջֆորմացիոն լավաների հոսքերի հաստաշերտերով: Վերը նշված հաստաշերտերը զբաղեցնում են զգալի տարածքներ Գեղամա լեռնաշղթայի հարավային և Վարդենիսի լեռնաշղթայի կենտրոնական մասերում: Վերը նշված բոլոր ապարները ջրամերժ են: Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների սահմաններում ծածկված են լավաներով: Միջլավային հոսքերի արտավիժման ժամանակահատվածները բնորոշվում են հողմնահարման երևույթներով՝ առաջացնելով խորը ձորակներ դեպի Սևանա լիճը, որոնցում կուտակված առաջացումները ներկայացված

ավագաքարերով, կավերով, տուֆոավագաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով:

Հիդրոտերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշումային ջրերը: Սևանի ավազանի հիդրոտերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Երկրաբանա-հիդրոտերկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սևանի ավազանի տարբեր տեղամասեր ունեն ինքնատիպ երկրաբանական կառուցվածք և դրա հետ կապված տարբեր հիդրոտերկրաբանական պայմաններ: Այդ տարբերությունները հիմնականում արտահայտվում են երկրաբանական կառուցվածքով, լիթոլոգիական կազմով, ծագմամբ, նստվածքառաջացման պայմաններով և առանձին տեղամասերի գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Դրա շնորհիվ, որոշ տեղամասերում տարածված են միայն գրունտային ջրեր, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացխաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր:

Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական լիթոսֆերային խոշոր սալերի բախման գոտում և այս հանգամանքով է բացատրվում տարածաշրջանի բարձր սեյսմիկականությունը: ՀՀ տարածքում հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ գոնաները. Մերձքուռյան, Սոմխետա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Չանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Նշված գոնաների սահմաններով են անցնում երկրակեղևի խորքային բեկվածքները: Դրանցից ամենախոշորն են Սևան-Աքերայի, Շիրակ-Չանգեզուրի և Միջին Արաքսյան (Երևանյան) բեկվածքները: Բեկվածքները թափանցում են երկրկեղևի 40-50կմ խորություններ, իսկ երկրկեղևի մակերեսին արտահայտվում են 5-10կմ լայնություն ունեցող գոտիներով, որոնց բնորոշ է օֆիոլիթային զուգորդության ձևափոխված ապարներ: Կազմված է ՀՀ սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզը, որով երկրի տարածքը բաժանված է գոտիների՝ ըստ միևնույն մեծության սեյսմիկ վտանգի աստիճանի: Համաձայն այդ քարտեզի ՀՀ հսուսիսային մարզերի հիմնական մասին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում $v=20$ սմ/վրկ² ($a=0.2g$, գրունտային սովարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ), որը համարժեք է մինչև 8 բալ երկրաշարժի ուժգնության:

Հայաստանում կան բազմաթիվ ակտիվ խզվածքներ, որոնցից ամենամեծը Փամբակ-Սևան-Սյունիք (ՓՍՍ) խզվածքն է: Այն ձգվում է ավելի քան 350 կմ և ունակ է հարուցել առավելագույնը մոտ 7.5 մագնիտուդայով (M_w) երկրաշարժեր: Խզումն ունի 5 հիմնական սեգմենտներ՝ 1-Արփի, 2-Վանաձոր, 3-Վանաձոր-Արտանիշ, 4-Արտանիշ-Սյունիք, 5-Սյունիք-Չանգեզու:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2018թ-ի հոկտեմբերի N 1261-Ն հրամանով հաստատվել է ՀՀ սեյսմիկ շրջանացման քարտեզը, որի համաձայն գազատարի ապամոնտաժման աշխատանքների տարածքը գտնվում է 0.3-0.4g գոտում:



5.11 Լանդշաֆտը

Կենտրոնական գոտու լանդշաֆտները առաջացել են Սևանա լճի ջրի մակարդակի իջեցման արդյունքում: Մինչև իջեցումը լճի մակարդակը 1916.0 մ էր: 2010թ. հունվար ամսվա դրությամբ լճի մակարդակը գրանցվել է 1899.23 մ՝ 16.77 մետրով ցածր սկզբնական նիշից: Ներկայիս կենտրոնական գոտու լանդշաֆտները ձևավորվել են բացված հատակային գրունտների և դրանց վրա անտառաշերտերի ստեղծման արդյունքում, որոնց ցամաքային տարածք լինելն այսօր չի գերազանցում 60 տարին: Այսպիսով կենտրոնական գոտու լանդշաֆտների էկոլոգիական համակարգերը չեն կարող պարունակել առաջնային բնական, էնդեմիկ կենսատեսակներ: Նշված լանդշաֆտները՝ մարդկային գործոնների ազդեցության ներքո բնական պայմանների փոփոխության և միջամտության արդյունք են: Դրա հետ մեկտեղ, կենտրոնական գոտու լանդշաֆտները այն տարածքներն են, որոնց կազմում է գտնվում ջրային ավամերձ և ցամաքային ջրամերձ գոտիների էկոհամակարգերի անմիջական փոխազդեցության անցումային շերտը:

Համապատասխանաբար, կենտրոնական գոտու տարածքների օգտագործման ռեժիմի հաստատումն ու կիրառումը կարևոր խնդիր է Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն և հոգևոր արժեք ունեցող,

քաղցրահամ ջրերի ռազմավարական նշանակության շտեմարանի և էկոհամակարգի բնական զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրականացման համար: «Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են ջրից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, սապրոպելիտային տափաստանացված, ինչպես նաև զգալի տարածքներ զբաղեցնող թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում առկա են լեռնատափաստանային չոր, իսկ 2400.0 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

6. ՏԱՐԱԾՍՇՐՁԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6.1 Գեղարքունիքի մարզը

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մարզը հյուսիսից սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ Կոտայքի մարզին: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ): Բարձր լեռներն են Սպիտակասարը (3 555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արզիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ): Ամենամեծ լիճը Սևանա լիճն է (1279.18 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1900.57 մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Արմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:



Գեղարքունիքի մարզը

Գեղարքունիքի մարզում է գտնվում Սևանա լիճը, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Մարզի տարածքում է գտնվում «Սևան» ազգային պարկը (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով:

Այստեղ պահպանվել են բույսերի 1 600 և կենդանիների 330 տարատեսակներ: Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը: Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան - Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին:

2018թ-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 3.3 %,
- գյուղատնտեսություն՝ 13.2%,
- շինարարություն՝ 3.5 %,
- մանրածախ առևտուր՝ 2.0 %,
- ծառայություններ՝ 0.9 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզկենտրոն Գավառը (2019թ. տարեսկզբին՝ 18.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

6.2 Ազդակիր համայնքը

Ծրագրի ազդակիր համայնքն է Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքը: Խոշորացված համայնքն ընդգրկում է Աղբերք, Շողակաթ, Արտանիշ, Դրախտիկ, Ծափաթաղ և Ջիլ գյուղերը: Համայնքը ստեղծվել է 2017թվականի հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովում համայնքների խոշորացման օրինագծով: Կենտրոնը Շողակաթ գյուղն է:

Շողակաթ համայնքը գտնվում է Արեգունի լեռների հարավ-արևելյան մասից դեպի Արտանիշի թերակղզի իջնող ճանապարհին, Սևանի լեռների լճահայաց լանջին: Հեռավորությունը մարզկենտրոնից 95-105 կմ, մայրաքաղաքից՝ 110կմ է:

Մշտական բնակչությունը 2018թ-ի դրությամբ՝ 3364 է, տնային տնտեսությունները՝ 1205, որոնցից 163-ը նպաստառու են:

Հողերի ընդհանուր չափը 31954.85հա, որից 23957.94հա՝ գյուղատնտեսական նշանակության:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Բնապահպանական ազդեցությունները շինարարության փուլում

Շինարարության փուլում հնարավոր է դիտվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության մի շարք բացասական երևույթները, ինչպես օրինակ՝ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտում, հողերի և լանդշաֆտի դեգրադացիա, հողերի էրոզիա, որը կարող է առաջանալ փորված/հանված հողի և շինարարական թափոնների ոչ պատշաճ հեռացման/ տեղադրման, շինարարության ընթացքում վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի, ժամանակավոր շինհրապարակների օգտագործման (շին. ճամբարներ, մեքենաների ավտոկայանատեղեր, պահեստավայրեր և այլն), օդի ժամանակավոր աղտոտում՝ կապված շինարարության ընթացքում բեռնատարների երթևեկության գրաֆիկի հետ, փորման աշխատանքների ժամանակ աղմուկ և տատանումներ, երթևեկության խաթարում՝ պայմանավորված շին.մեքենաների և սարքավորումների շարժման հետ, ինչպես նաև հնարավոր ազդեցություններ բուսածածկի վրա:

Ծրագրի շինարարության փուլում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները ներկայացվում են ստորև:

(ա) Շրջակա միջավայրի օդի աղտոտում

Շինարարական աշխատանքների ընթացքում փորման-բեռնման աշխատանքների արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի աշխատանքի ընթացքում առաջանում են փոշու /երթևեկության ժամանակ/ և դիզելային վառելիքի այրման ընթացքում ծխազագերի արտանետումներ: Եռակցման աշխատանքների ընթացքում առաջանում են եռակցման աերոզոլի և մանգանի օքսիդների արտանետումներ:

Ստորև ներկայացված են արտանետումների հիմնական աղբյուրները.

- անօրգանական փոշու արտանետումներ փորման-բեռնման աշխատանքների ժամանակ,
- արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման և երթևեկության ժամանակ,
- բենզինի գոլորշի,
- արտանետումներ գողման աշխատանքների ժամանակ:
- օդի աղտոտում հողի հանման և բեռնման և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- խողովակաշարից գազի արտահոսք համակարգից անջատման ժամանակ:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են բնակելի տարածքներից զգալի հեռավորության վրա, վնասակար նյութերը չեն կարող ազդել բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության վրա:

(բ) Զրային ռեսուրսների վրա ազդեցություններ

Ընդհանուր առմամբ, շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները նվազագույն կլինեն, քանի որ մոտակայքում գետեր չկան: Աշխատանքներն իրենցից ներկայացնում են պարզ փորման և խողովակաշարի ապամոնտաժման աշխատանքներ: Փորման առավելագույն խորությունը կարող է կազմել 1-1,5 մ: Հորատման աշխատանքներ չեն նախատեսվում: Համաձայն

տեղանքի ուսումնասիրության, գրականաական նյութերի արդյունքների և հիդրոլոգիական վերլուծությունների արդյունքների նախատեսվող աշխատանքների տեղմասում գրունտային ջրերի բարձր մակարդակներում հանդիպման հավանականությունը կարելի է գրեթե բացառել: Առավել խորը մասնագիտական ուսումնասիրություններ և վերլուծություններ կիրականացվեն հետագայում և արդյունքները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությունում: Նվազագույնի է հասցվելու և հնարավորության դեպքում բացառվելու են շինհրապարակներում պահեստավորված շինարարական նյութերով, շինարարական հոսքաջրերով տարածքի աղտոությունը, իսկ շինարարության ընթացքում աշխատողների կենսագործունեության արդյունքում տնտեսակենցաղային հոսքաջրերի կառավարումը իրականացվելու է ստորև ենթաբաժնում նշված եղանակով:

(գ) Ջրօգտագործում և ջրահեռացում

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է վարչական աշխատողների և բանվորների խմելու, կենցաղային/տնտեսական նպատակների համար, ինչպես նաև շինարարական հրապարակների ջրցանի, տրանսպորտային միջոցների սպասարկման համար:

Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է այդ նպատակի համար նախատեսված տարողություններով:

Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները կիրականացվեն 5060 մ(ապամոնտաժվող գազատարի երկարություն) երկարությամբ տեղամասում և գումարային շուրջ 6 մ լայնությամբ տարածք կներառվի շինարարական աշխատանքներում(շուրջ 4-5 մ մոտեցնող, սպասարկման ճանապարհ և շուրջ 1 մ լայնությամբ խրամուղի) իրականացման հաշվարկային մակերեսը կազմում է մոտ 25.000 մ², ջրցանի հաշվարկն իրականացվել է տարածքի այդ չափի համար.

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ}$$

S1 - ջրվող տարածքի մակերես, 25.000 մ²,

K1 - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²), տաք եղանակի պայմաններում ջրցան իրականացվում է օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ, 60 օր (շին աշխատանքների տևողությունը 120 օր է, որի հիմնական մասն իրականացվելու է գարնանային ամիսներին և ջրցանը կպահանջվի մասնակի):

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U1 = 25.000 \times 2 \times 0.0015 \times 60 = 4.500 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n1 \times N1) T1, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների թվաքանակ, 2 մարդ

N - ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T1 - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 120 օր

n1- բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 5 մարդ

N1 - քանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ}} = (2 \times 0.016 + 5 \times 0.025) \times 120 = 19 \text{ մ}^3$$

$$\text{Ընդահանուր ջրապահանջը կկազմի՝ } 4500 \text{ մ}^3 + 19 \text{ մ}^3 = 4519 \text{ մ}^3$$

Շինարարության փուլում կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են անջրանցիկ նյութերից կառուցված կեղտաջրերի հավաքման հորում /ԿՀՀ/, որը շինհրապարակի երկարությամբ պետք է տեղափոխվի: Ելնելով կեղտաջրերի հաշվարկային ծավալներից նախատեսվում է կառուցել 50 մ³ օգտակար ծավալով հոր, որը կապահովի 7-օրյա աշխատանքը: Նախատեսվում է շաբաթական մեկ անգամ հատուկ մեքենաներով արտահանել հորի պարունակությունը տեղական մարմինների հետ համաձայնեցված կոյուղու կոլեկտոր:

Վերը նշված ազդեցությունը կկրի ժամանակավոր բնույթ, սակայն կմեղմացվի Հավելված Ա-ում՝ Բնապահպանական կառավարման պլանում, ներկայացված միջոցառումների ժամանակին և պատշաճ իրականացման արդյունքում:

(դ) Հողային աշխատանքներ

Գազատարի ապամոնտաժման և խրամուղիների փորման աշխատանքները կարող են ժամանակավոր վնասակար ազդեցություն ունենալ հողային ծածկույթի և շրջապատող բուսական ծածկույթի վրա: Հանված գրունտի պահպանման հետևանքով, մինչև ետլիցք կատարելը կարող է վնասվել հողային ծածկույթը: Մինչև հողային աշխատանքների իրականացումը խրամուղու տարածքի երկայնքով բուսական ծածկույթը պետք է մաքրվի, ներառյալ՝ թփուտների հեռացումը:

Պահանջվում է խրամուղու տարածքի երկայնքով կատարել բուսաշերտի կտրում և պահեստավորում: Գրունտը և բուսահողը պետք է տեղադրել առանձին: Գործունեության ենթակա տարածքի հողաբուսաշերտի հանման, պահման և օգտագործման աշխատանքները կկազմակերպվեն ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ըստ բուսաբանական հետազոտությունների, ծրագրի համար նախատեսված տարածքներում գտնվող բուսատեսակները ընդգրկված չեն ՀՀ Կարմիր Գրքում:

(ե) Շինարարական նյութերի հանում

Շինարարության համար պահանջվող լցանյութերը նախընտրելի է ձեռք բերել արտոնագրված մատակարարներից և շահագործվող աղբյուրներից:

(զ) Թափոնների առաջացում

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքներում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Թափոններ կարող են առաջանալ քիչ քանակությամբ մնացորդային հողային զանգվածների տեսքով, քանի որ փորված հողի և բուսահողի հիմնական մասն օգտագործվում է ետլիցք կատարելու համար: Խողովակաշարերի անցկացման տարածքներում, որտեղ առկա է բուսական ծածկ կարող է պարունակել խոտ և թփուտներ, որոնք ևս հանդիսանում են թափոններ և պետք է հեռացվեն շինհրապարակից: Թափոնների մյուս տեսակները, որոնք առաջանում են ընդհանուր շինարարական գործողություններից, նույնպես ենթադրվում են ոչ մեծ քանակությամբ և կարող են

ներառել՝ մետաղական և պլաստիկ դատարկ տարաներ, շինարարական աղբ, շինհրապարակներում կամ ճամբարակայանում առաջացող կենցաղային աղբ, որոնք համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի 12.6 կետի ենթակա են տեղափոխման: Այս փուլում քննարկվում է աղբի տեղափոխման երկու տարբերակ՝ հեռացում համայնքի կողմից առաջարկվող թափոնավայր կամ մասնագիտացված ընկերությունների միջոցով, համապատասխան պայմանագրային հիմունքներով: Վերջնական տարբերակի ընտրության դեպքում հասանելի կլինեն գրությունները կամ պայմանագրերը, որոնք փորձաքննության հիմնական փուլում կներառվեն ՇՄԱԳ հաշվետվությունում:

7.2 Սոցիալական ազդեցությունները շինարարության փուլում

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

ա. երթևեկության աճ

Համայնքներում սպասվում է կարճաժամկետ երթևեկության աճ՝ կապված շինարարական տրանսպորտային միջոցների շարժման և մեքենաների շահագործման հետ: Սա կարող է խաթարել տեղական համայնքների խաղաղ կյանքը և երբեմն էլ արգելափակել ճանապարհները:

բ. մուտքի արգելափակում

Իրենց տներին, դաշտերին և գույքին հասնելու անհնարինության կամ անհարմարություն շինարարական ճամբարների, մեքենաների տեղադրման կամ շինարարական աշխատանքների պատճառով:

գ. աղմուկ և փոշի

Մեքենաների աշխատանքը կառաջացնի փոշի և աղմուկ, որը կարող է առողջական խնդիրներ առաջացնել համայնքներում:

դ. առողջական խնդիրներ

Շինարարության ընթացքում անտրակ և անհամապատասխան շինանյութերի օգտագործման արդյունքում աշխատողների առողջությանը կարող է վնաս հասցվել:

ե. պատահարներ շինարարական հրապարակում

Շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության կանոնների խախտման պատճառով տեղի ունեցած պատահարները կարող են մարմնական վնաս հասցնել շինհրապարակում գտնվող անձանց, երբեմն նույնիսկ մահացու հետևանքներով:

Հողօգտագործում

Աշխատանքների ընթացքում նախատեսվում է Շոդակաթ համայնքի, «Սևան» ազգային պարկի, վարձակալած կամ մասնավոր հողերի ժամանակավոր օգտագործում:

Ժամանակավոր տեղական զբաղվածություն

Շինարարության փուլում դրական սոցիալական ազդեցությունը հանդիսանում է տեղի չորակավորված աշխատուժի ժամանակավոր զբաղվածության հնարավորությունը:

Ակտիվների վնասում

Ապամոնտաժման աշխատանքների ժամանակ կարող են վնասվել սեփականատերերի ակտիվները՝ մասնավոր, համայնքային կամ ազգային պարկի գույքը:

Շինարարական ճամբարներ

Շինարարական ճամբարները պետք է տեղադրված լինեն համայնքային հողերում, ինչը նախապես պետք է համաձայնեցված լինի համայնքի հետ՝ մասնավոր հողերի օգտագործումից խուսափելու համար: Սակայն, եթե չօգտագործվող համայնքային հողերը մատչելի չլինեն, հողի սեփականատեր համայնքի հետ պետք է կնքվի վարձակալության համաձայնագիր:

8. ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրի նախագծման և շինարարության փուլերի համար նախատեսված են մեղմացնող միջոցառումներ, որոնք կձեռնարկվեն կատարողական մարմինների կողմից՝ վերը նշված բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու և/կամ մեղմացնելու համար:

Բնապահպանական և սոցիալական մեղմացնող միջոցառումների իրականացման պահանջները կներառվեն տեխնիկական մասնագրերում և մրցութային փաստաթղթերում: Այդ միջոցառումները կիրականացվեն շինարարության կապալառուի կողմից՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու, դրանք կանխարգելելու, մեղմացնելու կամ շտկելու համար:

8.1 Բնապահպանական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության փուլի ընթացքում լանդշաֆտի վատթարացումը, հողերի էրոզիան, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների և հողերի աղտոտումը կանխարգելելու և/կամ նվազագույնի հասցնելու համար նախատեսված համապատասխան միջոցառումները պետք է իրականացվեն կապալառուի կողմից: Այդ աշխատանքները ներառում են՝

- Արդեն իսկ գոյություն ունեցող թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համապատասխան թույլտվություններում և համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն), թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (այնպես, որ այդ վայրերը որևէ վնաս չհասցնեն բուսածածկին և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչներին), որոնք պետք է պահպանվեն շինարարության կապալառուի կողմից:
- Վնասված բուսածածկի վերականգնում և սկզբնական վիճակին վերականգնում (աշխատանքները սկսելուց առաջ հողի բերրի շերտը պետք է պատշաճ կերպով հանել և պահել համապատասխան վայրում):
- Վառելիքաքսուկային և քիմիական նյութերի պահեստավորման վայրերի կահավորում համապատասխան պարագաներով՝ հողերի և շրջակա տարածքների աղտոտման վտանգը նվազեցնելու համար:
- Երթևեկության և շինարարական հրապարակների մուտքի և ելքի սկզբունքների ապահովում՝ սահմանելով հստակ երթուղիներ, կայանման վայրեր և աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման միջոցառումներ՝ հատկապես այն դեպքում, երբ աշխատանքներն իրականացվում են բնակելի և հասարակական վայրերի մոտ: Այդ նպատակի համար շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ: Հողային աշխատանքները կատարել փոշեռսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով: Տրանսպորտային միջոցները և տեխնիկան պետք է պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի խլացուցիչներով: Շինհրապարակներն ու մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրվեն, իսկ խիճը, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացվեն փոշին նվազեցնելու նպատակով (բացի ձմռանից և տեղումներով առատ ամիսներից): Մորուն շինանյութերը պետք է պահեստավորվեն ծածկի տակ գտնվող և հատուկ թաղանթով պաշտպանված վայրում:

Շինհրապարակի որակը, բանվորական հագուստի մշակույթը, անվտանգության կանոնների պահպանումը պետք է կազմակերպվի և մշտադիտարկվի համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Բուսատեսակների և հողաբուսաշերտի պահպանություն

Շինարարական բոլոր տեսակ գործողությունների համար անհրաժեշտ է հատկացնել հնարավորինս նեղ միջանցք՝ գազատարի ուղեգծով: Մինչ շինարարությունը սկսելը գործունեության համար նախատեսված տարածքներում առկա թփերը պետք է հեռացվեն: Պետք է հետևել, որպեսզի բուսականության մաքրումը լինի միայն գազատարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վնասվելու դեպքում ծառերի արմատները ոչ-վեգետացիոն ժամանակաշրջանում ավելի հեշտ են վերականգնվում, խրամուղիների փորման աշխատանքներն իրականացվելու են բույսերի մինչ- կամ հետ-վեգետացիոն ժամանակահատվածներում: Դա կմեղմի կամ հնարավորինս կբացառի նախատեսվող աշխատանքների վնասակար ազդեցությունը բնական բուսածածկի և ծառաթփային բույսերի վրա: Բուսատեսակներին հասցվող վնասը նվազագույնի հասցնելու համար գազատարի վերանորոգման տարածքներում հողի բերրի շերտը՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն պետք է կտրել և պահեստավորել այդ նպատակի համար նախատեսված վայրում՝ հետագայում տարածքների վերականգնման համար օգտագործելու նպատակով: Խրամուղիների հետլիցքն ու հարթեցումը ապահովելուց հետո բուսածածկով պատված տարածքների հողաբուսաշերտը վերադարձվելու է նախկին տեղը:

Թափոնների կառավարում

Թափոնների կառավարման նպատակն է՝ կապալառուի և աշխատակիցների համար սահմանել շինարարության ընթացքում առաջացող թափոնների հեռացման, տեղադրման, կամ օգտագործման ճիշտ սկզբունքներ:

Անվտանգ թափոնները ներառում են՝ շինարարական և կոշտ կենցաղային թափոնները, բուսական մնացորդները, որոնք կարող են հանդիպել ջրանցքներում, կամ շինհրապարակներում թփուտների տեսքով և խոչընդոտել ապամոնտաժման աշխատանքների իրականացմանը: Այս թափոնների ոչ պատշաճ պահեստավորումը, տեղափոխումը և հեռացումը կարող են առաջացնել բացասական ազդեցություններ՝ շրջակա տարածքների համար:

Շինարարության ժամանակ առաջացող վտանգավոր թափոնները կարող են ներառել՝ մարտկոցներ, ներկեր, լուծիչներ, օգտագործված յուղեր, քսուքներ և քիմիական այլ թափոններ:

Կեղտաջրերը ներառում են՝ շինարարության հոսքաջրերը (որոնք կարող են առաջանալ շինհրապարակներում) և կենցաղային կոյուղաջրերը (որոնք կարող են առաջանալ աշխատողների տնտեսական գործունեության արդյունքում) և կարող են պարունակել աղտոտիչներ և պաթոգեն տարրեր:

Վերը նշված թափոնների վնասակար ազդեցություններից խուսափելու համար նախընտրելի են կառավարման հետևյալ սկզբունքները.

- խուսափել թափոնների արտադրությունից,
- կրկնակի օգտագործել, կամ հնարավորինս վերամշակել թափոնները,
- առաջացող թափոնները հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ղեկավարի, կամ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված,

- գոյություն ունեցող թափոնների հեռացման վայրերի օգտագործում (նախագծման փուլում ձեռք բերված համաձայնագրերում ամրագրված պայմանների համաձայն),
- շինանյութերը (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից,
- թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի հստակ սահմանում (բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր, որոնք կհաստատվեն համապատասխան մարմինների կողմից):

Շինարարական աշխատանքների ընթացքում յուրի և վառելիքի պահեստավորման կամ տեխնիկայի վերալիցքավորման ժամանակ արտահոսքը շրջակա տարածքներ և ջրային հորիզոններ բացառելու նպատակով շինճամբարում պետք է կազմակերպվի վառելիքի ժամանակավոր լցակետ, որը համալրված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով: Աշխատանքների ավարտից հետո այն պետք է ապամոնտաժվի: Արտահոսքերի դեպքում անհրաժեշտ է կատարել մաքրման աշխատանքներ և տեղյակ պահել ՇՄՆ-ին:

Օգտագործելով վերոնշյալ սկզբունքները և կիրառելով համապատասխան մեթոդները՝ թափոնների կառավարման հետ կապված ռիսկերը շինարարության ընթացքում կհասցվեն նվազագույնի:

Ավելցուկային բուսահողի օգտագործումը կանաչապատման նպատակով, իսկ մնացորդային հողային զանգվածի օգտագործումը ճանապարհների վերականգնման համար պետք է իրականացվի ազդակիր համայնքների ղեկավարների հետ համաձայնեցված:

8.2 Մոցիալական ազդեցությունների մեղմացումը շինարարության փուլում

Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ

Շինարարության կապալառուն պետք է պատշաճ կերպով տեղեկացնի ազդակիր համայնքներին՝ շինարարական աշխատանքների սկսվելու մասին, որի արդյունքում կարող են ժամանակավորապես փակվել ճանապարհները կամ խոչընդոտներ առաջանալ ճանապարհներին, փոշու և աղմուկի մակարդակը կարող է ավելանալ, ճանապարհները ժամանակավորապես կարող են փակվել և կարող են խոչընդոտներ ստեղծվել: Նման ազդեցությունները մեղմելու նպատակով կապալառուն կիրականացնի հետևյալ միջոցառումները.

ա. երթևեկության աճ

Կապալառուն համայնքին կառաջարկի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհ:

բ. մուտքի արգելափակում

Կապալառուն շինարարական ճամբարները, շինարարական տեղնիկան կտեղադրի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար:

գ. աղմուկ և փոշի

Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.

- շինարարական ճամբարները կազմակերպել բնակելի տարածքներից հնարավորիս հեռու,

- աղմկոտ աշխատանքները պետք է իրականացնել ցերեկվա ժամերին, իսկ գիշերվա ժամերի աշխատանքներից պետք է խուսափել,
- հնարավորինս նվազեցնել ծանր տեխնիկայի օգտագործումը բնակավայրերի մոտակայքում,
- մեքենաների վրա պետք է ձայնախլացուցիչներ տեղադրվեն,
- բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կիրառել փոշու կառավարման տեխնոլոգիաներ:

դ. առողջական խնդիրներ

Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ չառաջացնելու նպատակով, կապալառուն պետք է կիրառի միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր:

ե. Շինարարական աշխատանքների հետ կապված անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, առաջարկվում են հետևյալ մեղմացնող միջոցառումները.

- բարձրացնել իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ,
- ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ,
- ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան
- ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն,
- ապահովել , որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն,
- ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին,
- ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ,
- աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում,
- ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել:

Ակտիվների վնասում

Ապամոնտաժման աշխատանքների հետևանքով վնասված ակտիվները պետք է վերականգնվեն կամ փոխհատուցվեն: Անշարժ գույքով ծանրաբեռնված հատվածներում ապամոնտաժման աշխատանքների իրականացման անհնարինության դեպքում, գազատարի տվյալ հատվածը հնարավոր է չապամոնտաժվի:

Շինարարական ճամբարներ

Եթե չօգտագործվող համայնքային հողեր մատչելի չլինեն, հողի սեփականատեր համայնքի հետ պետք է կնքվի վարձակալության համաձայնագիր:

Հավելված 1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան. մեղմացնող միջոցառումներ

Հնարավոր քաղաքական ազդեցություն	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
<i>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</i>					
Հողի բերրի շերտի վնասում	<ul style="list-style-type: none"> - Նախքան հողային աշխատանքներին անցնելը վերին շերտի հեռացում և պահեստավորում՝ վերականգնման փուլում օգտագործելու համար. - Շին.մեքենաների ոչ կարգավորված տեղաշարժի քաղաքում՝ հողի մակերեսի վրայով: Թույլ տալ դրանց տեղաշարժումը միայն գոյություն ունեցող կամ նշանակված ժամանակավոր ճանապարհներով. - Աշխատանքների ավարտից հետո՝ տարածքի մաքրում, մակերեսի վերականգնում հողի բերրի շերտով 	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխատանքների ընթացքում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանա- տու կազմակերպու- թյուն	Մեղմացնող միջոցառումնե- րի ժամանակը	Վերահսկող կազմակեր- պություն	Մեղմացնող միջոցառումնե- րի ծախսերը
Ազդեցություն կենսաբազմազանության վրա	<p>- Նվազեցնել ազդեցությունը բույսերի վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում.</p> <p>- Սահմանափակել բնական միջավայրերի խախտումը՝ շինարարական գործողությունների համար հատկացնելով նեղ միջանցք գազատարի ուղեգծով: Արգելել տրանսպորտային միջոցների / սարքավորումների տեղաշարժը և շին. նյութերի/թափոնների անփութորեն տեղադրումը չափից մեծ տարածքում ծրագրի գոտու շուրջ:</p> <p>- Խստորեն վերահսկել բուսականության մաքրումը գազատարի ուղեգծի երկայնքով՝ սահմանված միջանցքից դուրս ազդեցությունները կանխելու համար</p>	Կապալառու	Աշխատանքները սկսելուն պես և հողային աշխատանքների ընթացքում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.
Գազատարի ուղեգծի երկայնքով բուսականության մաքրում և թփերի հեռացում	<p>- բուսականությունից մաքրվող տարածքների համար իրականացնել սահմանագծում և համաձայնեցնել այն շինարարության վերահսկողի հետ.</p> <p>- Վարել հեռացված թփերի ճշգրիտ գրանցումներ.</p>	Կապալառու	Ծառերի մաքրումից առաջ, ընթացքում և հետո	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.
Շինարարական ճամբարների շահագործում	<p>- Շինարարական ճամբարների համար ընտրել բուսածածկից ազատ տարածքներ.</p> <p>- Շինարարական հրապարակները տեղակայել բացառապես համայնքային հողերի վրա, որոնց համար նախկինում թույլտվություններ են ձեռք բերվել</p>	Կապալառու	Շինաշխատանքներից առաջ	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
	<ul style="list-style-type: none"> - Շինարարական ճամբարներն ապահովել ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ և միջոց պահել այդ համակարգերը բարվոք տեխնիկական վիճակում. - Ապահովել շինարարական ճամբարները աղբամաններով և մշտական աղբահանությունը - Շինարարական աշխատողներին արգելել թափոնների բաց այրումը: 				
Շինարարության ընթացքում թափոնների առաջացում և կառավարում	<ul style="list-style-type: none"> - շինհրապարակում առաջացող թափոնները ժամանակավոր կուտակել բնապահպանական տեսանկյունից առավել ընդունելի վայրեր և հեռացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով - կենցաղային թափոնների և շինարարական աղբի տեղադրում համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված - վտանգավոր նյութերի հեռացում համաձայնագրերի պայմաններին՝ համապատասխան մարմինների հետ համաձայնեցված - Արգելել ցանկացած տեսակի թափոնների բացօթյա այրումը - Նախատեսել որքանով հնարավոր է թափոնների վերամշակումը և կրկնակի օգտագործումը և խուսափել արտադրությունից 	Կապալառու, Տեղական մարմիններ	Շին.աշխատանքների ընթացքում, հեռացնել կուտակումից հետո 3-5 օրվա ընթացքում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
	- շինանյութերը (իներտ նյութեր, բետոն) ձեռք բերել լիցենզավորված մատակարարներից				
Վառելիքաքսուկային կամ այլ նյութերի արտահոսք	-Արտահոսքերի վերահսկման միջոցառումների իրականացում, - վտանգավոր նյութերի ինչպիսիք են՝ նավթը, քսայուղերը, տարբեր տեսակի վառելանյութերը, պատշաճ պահեստավորում հատուկ մշակված սահմանագծում, -տեխնիկական միջոցների վառելանյութով լիցքավորում լցավորման կայաններում՝ խուսափելու համար արտահոսքերից	Կապալառու	Շինարարական աշխատանքների ընթացքում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Շինարարական աշխատանքների ընթացիկ ծախսեր
Օդի աղտոտվածություն՝ մեքենաների արտանետումներից և շինարարական փոշուց	- Պահել մեքենաները և սարքավորումները համապատասխան տեխնիկական վիճակում՝ ավելորդ արտանետումներից խուսափելու համար - Խուսափել շարժիչների անգործությունից - Միշտ ծածկել շինարարական նյութերով և աղբով բեռնված բեռնատարները. - Ջրցանել շին.հրապարակը չոր եղանակին և փոշու մեծ ծավալ առաջացնող աշխատանքների իրականացման ժամանակ:	Կապալառու	Շին.աշխատանքների ժամանակ ըստ անհրաժեշտության և կիրառելիությամբ	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.
Երթևեկության խաթարում՝ պայմանավորված	- Ապահովել շին.մեքենաների մուտքն ու ելքը շինարարական հրապարակներ՝ սահմանելով անցումներ	Կապալառու	Շին. աշխատանքների մեկնարկին	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում.

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանատու կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ժամանակը	Վերահսկող կազմակերպություն	Մեղմացնող միջոցառումների ծախսերը
<p>Չին.մեքենաների և սարքավորումների շարժման հետ</p>	<p>և ժամանակավոր ճանապարհներ, կայանատեղեր “ մշակելով ժամանակացույց ըստ անհրաժեշտության.</p> <p>- Տեղադրել զգուշացնող և երթևեկության կարգավորման նշաններ ճանապարհների այն հատվածներում, որտեղ կարող են առաջանալ տեղական երթևեկության խաթարումներ: Ըստ անհրաժեշտության ներգրավել երթևեկության կարգավորողներին:</p>		<p>զուգընթաց և աշխատանքների ընթացքում</p>	<p>կենտրոն» մասնաճյուղ</p>	
<p>Շինարարության հետ կապված ժամանակավոր ազդեցություններ</p> <p>1. երթևեկության աճ</p> <p>2. մուտքի արգելափակում</p> <p>3. աղմուկ և փոշի</p>	<p>1. համայնքին կառաջարկվի շինարարական տեղամասը շրջանցող ճանապարհի</p> <p>2. շինարարական ճամբարները, շինարարական տեխնիկան կտեղադրվի բնակավայրից հեռու, հանրային կառույցների, մասնավոր գույքի և/կամ հողերի մուտքը չարգելափակելու համար</p> <p>3. Շինարարության և սարքավորումների աշխատանքի հետևանքով առաջացող փոշու և աղմուկի ազդեցությունը մեղմելու նպատակով հարկավոր է.</p> <ul style="list-style-type: none"> • շինարարական ճամբարները կկազմակերպվեն բնակելի տարածքներից հեռու, 	<p>Կապալառու</p>	<p>Շին. աշխատանքների մեկնարկին զուգընթաց և աշխատանքների ընթացքում</p>	<p>Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ</p>	<p>Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում</p>

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանա- տու կազմակերպու- թյուն	Մեղմացնող միջոցառումնե- րի ժամանակը	Վերահսկող կազմակեր- պություն	Մեղմացնող միջոցառումնե- րի ծախսերը
<p>4. առողջական խնդիրներ</p> <p>5. պատահարներ շինարարական հրապարակում</p>	<ul style="list-style-type: none"> • աղմկոտ աշխատանքները կիրականացվեն ցերեկվա ժամերին, • հնարավորինս կնվազեցվի ծանր տեխնիկայի օգտագործումը բնակավայրերի մոտակայքում, • մեքենաների վրա կտեղադրվեն ձայնախլացուցիչներ, • բնակավայրերում աշխատանքներ իրականացնելիս, կկիրառվեն փոշու կառավարման տեխնոլոգիաներ: <p>4. Աշխատողների շրջանում ալերգիկ, շնչառական և այլ առողջական խնդիրներ չառաջացնելու նպատակով, կկիրառվեն հակա-ալերգիկ, միջազգային չափորոշիչներին համապատասխանող շինանյութեր,</p> <p>5. Աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու կամ դրանցից խուսափելու համար, կկիրառվեն հետևյալ մեղմացնող միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> • բարձրացնել իրազեկվածությունը շինարարական աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունների վերաբերյալ, • ապահովել, որ բանվորները և տեղանքի ցանկացած այցելու ապահովված լինի և օգտագործի անձնական պաշտպանիչ արտահագուստ, 				

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանա- տու կազմակերպու- թյուն	Մեղմացնող միջոցառումնե- րի ժամանակը	Վերահսկող կազմակեր- պություն	Մեղմացնող միջոցառումնե- րի ծախսերը
	<ul style="list-style-type: none"> • ապահովել, որ բանվորները տեղամասի անվտանգության վերապատրաստում ստանան • ապահովել, որ խոշոր սարքավորումներ աշխատեցնողները պատշաճ կերպով վերապատրաստված և լիցենզավորված լինեն, • ապահովել, որ շինարարական սարքավորումները ստուգված և լիցենզավորված լինեն, • ապահովել, որ շինարարական տեխնիկան օգտագործվի խստորեն հետևելով շահագործման հրահանգներին, • ունենալ առաջին օգնության բժշկական փաթեթներ և հակահրդեհային սարքավորումներ, • աշխատանքային ժամերից դուրս արգելել գործունեությունը տեղանքում, • ապահովել, որ ակտիվ աշխատանքային տարածքները լինեն ցանկապատված, այնպես որ երեխաները, մարդիկ չկարողանան մուտք գործել և վնասվել: 				
Համայնքային, ազգային պարկի, վարձակալած, մասնավոր հողերի	Շինարարության ընթացքում հողը կօգտագործվի սեփականատիրոջից, վարձակալից նախապես ձեռքբերված համաձայնությունների շրջանակներում:	Կապալառու, պատվիրատու	Շինաշխատանքն երի մեկնարկից առաջ	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում

Հնարավոր բացասական ազդեցություն	ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	Պատասխանա- տու կազմակերպու- թյուն	Մեղմացնող միջոցառումնե- րի ժամանակը	Վերահսկող կազմակեր- պություն	Մեղմացնող միջոցառումնե- րի ծախսերը
Ժամանակավոր օգտագործում				կենտրոն» մասնաձյուղ	Ընթացիկ ծախսեր
Վնասված գույքի փոխհատուցում	Ապամոնտաժման աշխատանքների հետևանքով վնասված ակտիվները պետք է վերականգնվեն կամ փոխհատուցվեն: Անշարժ գույքով ծանրաբեռնված հատվածներում ապամոնտաժման աշխատանքների իրականացման անհնարինության դեպքում, գազատարի տվյալ հատվածը հնարավոր է չապամոնտաժվի	Պատվիրատու	Շինարարության մեկնարկից առաջ և ընթացքում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընթացիկ ծախսեր
Հողօգտագործում շինարարական ճամբարների ստեղծման նպատակով	Շինարարության կապալառուն ձեռք կրերի համայնքի հանաձայնությունը համայնքային չօգտագործվող հողի վրա շինարարական հրապարակ հիմնելու համար կամ կստորագրի հողի վարձակալության պայմանագիր:	Կապալառու	Շինարարությա ն մեկնարկից առաջ	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ	Ընդգրկված է ընդհանուր նախահաշվում

Հավելված 2. Մշտադիտարկման պլան

Սույն մշտադիտարկման պլանը կօգտագործվի Բնապահպանական կառավարման պլանի (Հավելված 1) իրականացման համապատասխանությունը որոշելու նպատակով

Մեղմացնող միջոցառումներ	Մոնիտորինգի ցուցանիշներ	Մոնիտորինգի ժամանակը/ հաճախականությունը	Մոնիտորինգի մեթոդները	Վերահսկող կազմակերպություն
Շինարարության փուլ				
Խրամուղիներից հանված գրունտը դարսվում է համեմատաբար հարթ և բուսականությունից ազատ տարածքներում և օգտագործվում է խողովակների ապամոնտաժումից հետո հետլիցքի համար	Հողային աշխատանքների տարածքների տեսողական հայտնաբերում	Հողային աշխատանքների ժամանակ	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ
Շին.մեքենաները շարժվում են տեղական գոյություն ունեցող ճանապարհներով կամ ժամանակավոր մոտեցնող ճանապարհներով, չանցնելով անկանոն կերպով հողային մակերեսների վրայով	Շինարարության տարածքում և դրա շուրջը հողային մակերեսների տեսողական հայտնաբերում	Շինարարության ընթացքում	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ
Ավելցուկային գրունտը օգտագործվում է գոյություն ունեցող գրունտային ճանապարհի հարթեցման համար և/կամ տեղափոխվում է այլ տարածք, որը համաձայնեցված է տեղական ղեկավարության հետ	Գրունտի թափոնատեղերի տեսողական հայտնաբերում, Համաձայնեցման փաստաթղթեր	Հողային աշխատանքների ժամանակ և դրանց ավարտից հետո	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ
Շինարարական նյութերի և թափոնների կառավարում տեղում	Շին.նյութերը և աղբը պահվում են աշխատանքային տարածքի ներսում հատուկ նշված վայրերում,	Շինարարական աշխատանքների ընթացքում	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաձյուղ

	Շին.աղբի ավելորդ քանակ չի կուտակվում տեղում			կենտրոն» մասնաճյուղ
Վառելիքաքսուկային և այլ վտանգավոր նյութերը պահեստավորվում են հստակ սահմանագծում	Շինարարության տարածքում և դրա շուրջը հողային մակերեսների տեսողական հայտնաբերում, հանձնման փաստաթղթեր	Շինարարական աշխատանքների ընթացքում, ամիսը մեկ անգամ	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ
Շին.նյութերի և թափոնների տեղափոխման համար օգտագործվում են ծածկվող բեռնատարներ	Բեռնատարների պայմանները	Ամբողջ շինարարության ընթացքում	Տեսողական ստուգում տրանսպորտի ուղեգծի երկայնքով	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ
Շին.հրապարակների փոշենստեցում՝ ջրցանման միջոցով	Շին.հրապարակների պայմանները	Չոր եղանակին շինարարություն իրականացնելիս	Տեսողական ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ
Տրանսպորտային միջոցները համապատասխան տեխնիկական վիճակում են և ունեն աղակախլացուցիչներ	Տրանսպորտային միջոցների տեխնիկական պայմաններ	Օրական	Աղմուկի մակարդակի չափիչներ	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ
Շինարարության նպատակով ժամանակավոր օգտագործման հողատարածքների համար սերվիտուտի համաձայնագրերի ստորագրում համայնքների / տեղական ղեկավարման մարմինների հետ	Սերվիտուտի կամ հողօգտագործման համաձայնագրերի առկայություն	Մինչ Կապալառուի մոբիլիզացումը շին.հրապարակ	Փաստաթղթերի ստուգում	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ
Աշխատողների առողջության և անվտանգության ստանդարտների կատարում	Աշխատողներն ապահովված են և օգտագործում են անձնական անվտանգության հարմարանքներ,	Շինարարության ընթացքում	Տեսողական ստուգում,	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ

	<p>Բարդ մեխանիզմների վրա աշխատող անձնակազմը անցել է համապատասխան վերապատրաստում,</p> <p>Աշխատատեղերը ապահովված են առաջին օգնության համար անհրաժեշտ բժշկական պարագաներով և հակահրդեհային սարքավորումներով,</p> <p>Աշխատանքի հետ կապված լուրջ պատահարներ տեղի չեն ունեցել:</p>		<p>Անձնակազմի վերապատրաստման փաստաթղթերի և մեքենաների շահագործման համար լիցենզիաների ստուգում</p>	<p>կենտրոն» մասնաճյուղ</p>
<p>Շին.հրապարակների վերականգնում՝ հեռացնելով թափոնները, կատարելով հողի վերին շերտի հետլիցք և հարթեցում</p> <p>Շինհրապարակի մշտադիտարկումը կազմակերպվում է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:</p>	<p>Շինարարության միջանցքի նախնական տեսքի վերականգնում,</p> <p>Շին.կյութերի և թափոնների մնացորդների և աղբի բացակայությունը</p> <p>Որակի, Բանվորական հագուստի մշակույթի, անվտանգության կանոնների պահպանում</p>	<p>Շինարարության ընթացքում և գործունեության վերջին փուլում</p>	<p>Տեսողական ստուգում</p>	<p>Գազպրոմ Արմենիա ՓԲԸ, «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղ</p>

Հավելված 3. Հանրային քննարկումների հայտարարություն, արձանագրություն և մասնակիցների ցանկ



Առօրինի ԵՐԶԱՆԱՌՈՒՅՄԱՆ Ծավալը նվազել է

Աշխարհում նվազել է փողոսկրի և ռնգեղջյուրի եղջյուրի առօրինի ԵՐԶԱՆԱՌՈՒՅՄԱՆ Ծավալը, սակայն աճել է վագրերի առօրինի որսը: Ինչդեռ սեղեկացնում է «Արմենոյեր»-ը, այս մասին նշված է ՄԱԿ-ի բժրամիջոցների և հանցավորության հարցերով գրասենյակի նոր զեկույցում:

Չեկույցում ներկայացված են վայրի բնության մեջ կասարվող հանցագործության հիմնական միտումները, և վերլուծվում են փողոսկրի, ռնգեղջյուրի եղջյուրի և այլ հազվագյուտ կենդանիների առեւտրով զբաղվող եռակները:

Ըստ զեկույցի՝ փողոսկրի և ռնգեղջյուրի եղջյուրի նկատմամբ դահանգարկը նվազել է: 2016-ից մինչև 2018 թվականները փողոսկրի և ռնգեղջյուր եղջյուրի առեւտրից սարեկան հատույթը գնահատվել է համադասասխանաբար 400 միլիոն և 230 միլիոն դոլար:

Կին վարորդը ՏՈՒՂԱՆՎԵԼ ԵՒ «703 կմ/ժ» արագություն զարգացնելու համար

Իսպանական Անկոնա մահանգի Օֆանյա ֆաղափ ծանադարհային անսարք սեսախցիկը մեքենայի թույլատրելի արագության 10-ակի գերազանցում է ֆիխել և մի կին վարորդի համար տուգանքի դատաճար

դարձել, հայտնում է «Tert.am»-ը: Տեղ թույլատրելի է եղել առավելագույնը զարգացնել, կինը, ըստ կի, «Ford Focus» մակնիշի հին մեքենայի վրա արագությունը հասցրել է 703 կմ/ժ արագության:

Չայսնի է, որ ծանադարհային սեսախցիկի ցուցմունքը չի ստույգ մեքենայի շիրոջ համար 850 եվրոյի սահմանել:

Կինը նաև իր վարորդական տուգանային միավոր է ստացել: Նշվում է, որ իսպանիկն սնանկ համաձայն չէ, ուստի՝ հայտարարել է բողոքարկել այն:

Վախճանվել է Կարեն Վարդանյանը

Խոր վեցով սեղեկացանք, որ 57 տարեկանում կյանքից հեռացել է Առաջադասար սեյսմոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՄ) գործադիր սեօրեն Կարեն Վարդանյանը: Նա մեծ ավանդ է ունեցել Հայաստանում սեյսմոլոգիական ոլորտի առաջխաղացման, «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների միջոցով STEM կրթությունը հանրակրթական դպրոցներում ներդրելու գործում:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը ցավակցում և իր վեցակցությունն է հայտնում Կարեն Վարդանյանի ընտանիքին և հարազաններին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
2020 թվականի օգոստոսի 10-ին, ժամը 11:00-ին Մրազաժոնսի մարզի Սասունիկ համայնքում սեղի կոնցենա Սասունիկ համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի անուղղվաճառ: Անուղղի է դրվում՝ 1) 0211-0118 ծածկագրի սակ գեկվող 5-րդ կարգի 12.874008 հա, գյուղատնտեսական նշանակության վարելահողը 1 լոտով, 2) 0211-0112 ծածկագրի սակ գեկվող 4-րդ կարգի 8.246715 հա, գյուղատնտեսական նշանակության վարելահողը 1 լոտով, 3) 0211-0117 ծածկագրի սակ գեկվող 4-րդ կարգի 1.129866 հա, գյուղատնտեսական նշանակության վարելահողը 1 լոտով: Անուղղի դրված հողատնտեսության մեկնարկային գինը սահմանված է՝ հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով: Նախաձեռնող հողամասի կադաստրային արժեքի՝ 5%-ի չափով, չափով՝ 10.000 (սաս հազար) ՀՀ դրամ: Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան: Հայտերը ընդունվում են մինչև սույն թվականի օգոստոսի 7 -ը: Սասունիկի գյուղատնտեսության: Հեռախոս (093)-24-05-97:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԶԵՆԱԿՐԻՄՍԵՐԻ ՎԵՏՆԱԿԵՐՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ
«Երգակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձնորոշման մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 30-110-Ն/ համաձայն, ինչդեռ նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2020թ-ի հուլիսի 22-ին ժամը 11:00-ին ՀՀ գեղարվեստի մարզի Երգակաթի (կենտրոնը՝ Երոճա) համայնաթեսարանում սեղի կոնցենան «Երգակաթի ԳԲԸ-ի մասնաթաղ» ստորգեկայ միջին ձեռնարկում է գործող զագասարի ադանոցատնում նախաձեռնող վերաբերյալ հանրային ծանուցում և ինժեներական լաբորատորիաների մասնաթեսարանում կարելի է ծանուցանել «Պազորում Արմենիա» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մասնաթեսարանի գրասենյակում, և. Երեան, Թրիկյան խնդրի 43 հասցեում:

Նախաեսնող հանույին ծանուցում ու ինժեներական իրականացվելու են՝ դաշտայնեղ մասնակիցներ միջև անհրաժեշտ ֆիզիկական հեռավորություն ու ինժեներական օրվա և ժամի դրությամբ ՀՀ օրենսդրությամբ և Պարեսասն որոշումներով գործող, ինչդեռ նաև արևակար դրությամբ թայնամակրված հնարավոր սահմանափակումները: Ցնճարկումների բոլոր մասնակիցները կարողանան ղեկավարելու է ծնունդներով, իսկ ինժեներական վայրում հասանելի կլինի բավարար հանակրությամբ պատահանել հեղուկ:

ՍՓՅՈՒՌ
www.spyur.am

ՄՊՐԱՆԵՍ ՏՈՒՆՅՈՒՆ
անվճար

ՀԱՊԱՏՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հրատարակելի «Արմենոյեր» ՓԲԸ
Գրանցման վկայական N 27312002251, գրանցման ամսաթիվ՝ 17.03.1998թ.:

Երեան 23, Արալունյաց դպրոցա 4 (Մախկիմո Գովազդի 526974: www.hhpress.am: E-mail: info@hhpress.am)
Գովազդի դասասխանավորությունը կրում է դաշտայնեղ ընդունվում են միայն էլեկտրոնային սահմանափակումները թարակիր չէ գրախոսել, խնդրել Երեանում հողվածները գովազդային են, որոնց հետևանքով հրատարակություն ՓԲԸ:
Ծավալը՝ 4 տղազրական մամուլ: Գրանցման թիվը՝ 100 դրամ: Ինչեկված է տղազրության 4 տղազրական մամուլ՝ Մամվել ՍԱԴԱՍՅԱՆ
Համարի դասասխանաթու, գլխավոր խնդրագրի

Արձանագրություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի համայնապետարանում «Օովագյուղի ԳԲԿ-Ճամբարակ ստորգետնյա միջին ճնշման D=300մմ չգործող գազատարի ապամոնտաժում» նախագծի վերաբերյալ հանրային քննարկման

(1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկում)

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք

22 հուլիսի, 2020թ.

Հանրային քննարկումը կազմակերպվել էր Շողակաթի համայնապետարանում 2020թ-ի հուլիսի 22-ին ժամը 11-ին: Քննարկմանը մասնակցում էին համայնքի ղեկավարը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սևանի ԳԳՄ աշխատակիցները, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ճարտարապետը, նախագծի ՇՄԱԳ և բնապահպանական փորձաքննության հարցերի պատասխանատու «ԻՄԻԻ Քաուքազուս» ՍՊԸ ներկայացուցիչները: Քննարկումը բացեց համայնքի ղեկավար պարոն Շուշանյանը, ով ներկայացրեց քննարկման նպատակը:

ՇՄԱԳ փորձագետ Մարտիրոս Նալբանդյանը ողջունեց մասնակիցներին, ներկայացավ նշելով, որ «ԻՄԻԻ Քաուքազուս» ՍՊԸ պատասխանատու է նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում ձեռնարկողին մասնագիտական խորհրդատվության և կազմակերպչական աջակցության համար: Այնուհետև նա խնդրեց մասնակիցներին նույնպես ներկայանալ:

Մ. Նալբանդյանը մասնակիցներին տեղեկացրեց, որ նախագծով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են «Սևան» ազգային պարկի տարածքում, որով պայմանավորված, անկախ նախագծային պարամետրերից, նախագիծը պետք է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն անցնի: Նա մանրամասնեց, որ ՀՀ օրենսդրության, մասնավորապես «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եվ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքների պահանջների համաձայն հաստատվում է Սևան ազգային պարկի միջոցառումների ծրագիրը և մասնավորապես, 2018թ-ի միջոցառումների ծրագիրը պահանջում էր, որպեսզի տնտեսվարողները ջրածածկման ենթակա տարածքներից հանեն իրենց ենթակառուցվածքները: Այդ տարածքում Գազպրոմ Արմենիան նույնպես ունի չգործող 5060մ երկարությամբ 300մմ տրամագծով Ճամբարակ-Սևան գազատարը, որը պետք է ապամոնտաժվի: ՄԸ Նալբանդյանը ներկայացրեց նախագծային մանրամասներ՝ նախագծի 4 հատվածները, դրանց երկարությունները, աշխատանքների բնույթը, որը հիմնականում ենթադրում է փորման, ապամոնտաժման և ետլիցքի աշխատանքներ: Նա նշեց, որ այս աշխատանքները ՇՄԱԳ փորձաքննություն պահանջող այլ աշխատանքների համեմատ իրենց բնույթով էական ազդեցություն չեն ենթադրում, սակայն որոշ հատվածներում հնարավոր է ծառահեռացումների կարիք լինի: Նա հավելեց, որ նախագիծը պատրաստվել է Գազպրոմ Արմենիայի Ինժեներական կենտրոն մասնաճյուղի կողմից՝ նախապես համայնքապետարանից ձեռք բերելով

Ճարտարապետահատակագծային առաջադրանք, աշխատանքների տևողությունը 4 ամիս է, կօգտագործվի ստանդարտ չափերի տեխնիկա, շրջակա միջավայրի վրա կլինի ժամանակավոր ազդեցություններ, որոնք գնահատված և արձանագրված կլինեն ՇՄԱԳ փաստաթղթում իրենց համապատասխան մեղմացնող միջոցառումներով: Նա ներկաներին բացատրեց, որ Սևան ազգային պարկի վերահսկողական դերակատարությունը մեծ է այս աշխատանքների շրջանակներում, միևնույն ժամանակ ապամոնտաժման աշխատանքներն իրականացվում են ազգային պարկի պահանջով, ուստի համատեղ ուժերով կիրականացվեն այս աշխատանքները: Նա նշեց, որ նախագիծը Բ կատեգորիայի է դասակարգվում, քանի որ գտնվում է Սևան ազգային պարկի տարածքում, որն էլ ենթադրում է թվով 4 հանրային լսումների կազմակերպում: Առաջին հանրային լսման նպատակն է ներկայացնել նախագծային հիմնական ցուցանիշները և ակնկալվող աշխատանքները:


Հանդիպման ընթացքում հնչեցին հետևյալ հարցերը, կարծիքներն ու տեսակետները և տրվեցին համապատասխան պատասխաններ և բացատրություններ

Հարց	Պատասխան
<p>Կարեն Բաբայան - Որոշ հատվածներում աշխատանքները հնարավոր է իրականացվեն հանգստյան գոտիներում, եթե մեզ տրամադրվի նախագիծը, մենք կկարողանանք հասկանալ, ինչ տարածքներ են ազդեցության ենթարկվելու և պարզել դրանց վարձակալներին կամ սեփականատերերին: Որոշ դեպքերում գուցե փոխհատուցում կնախատեսվի:</p>	<p>Մարտիրոս Նալբանդյան - Իհարկե, դուք կունենաք նախագիծը և կկարողանաք որոշակիացնել, իդենտիֆիկացնել տարածքները:</p>
<p>Մխիթար Միմոնյան - Որոշ տարածքներում հնարավոր է կառույցներ ու շինություններ լինեն խողովակաշարի վերևում, որը անհնարին կդարձնի տվյալ հատվածում աշխատանքների իրականացումը:</p>	<p>Կարեն Բաբայան - Սեփականատերերն իրենք հնարավոր է չհամաձայնեն, որպեսզի իրենց տարածքում ապամոնտաժման աշխատանքներ իրականացվեն:</p>
<p>Մխիթար Միմոնյան - Ազդեցության տարածքում կան բարեկարգված հանգստյան գոտիներ, որտեղ իսկապես հնարավոր չի լինի իրականացնել աշխատանքներն առանց քանդելու կառուցված շինությունները, վարձակալները հնարավոր է չհամաձայնեն: Կամ նրանք կարող են պահանջել իրենց շինությունների ապամոնտաժում և վերականգնում, որը բավական կթանկացնի նախագիծը: Ամեն դեպքում նախաձեռնությունը գալիս է ազգային պարկից, և եթե նրանց կողմից քանդելու պահանջ լինի, մենք կքանդենք:</p>	<p>Կարեն Բաբայան - Երբ մեզ տրամադրվի նախագիծը և մենք ունենանք ապամոնտաժվող խողովակաշարի հետագիծը, մենք կվերլուծենք ազդակիր տարածքները և կներկայացնենք մեր դիրքորոշումը հաջորդ հանդիպման ընթացքում:</p>


<p>Մարտիրոս Նալբանդյան - Նաև պետք է նշել, որ վարձակալները չունեն սեփականության իրավունքներ, ենթադրվում է, որ իրենք տարածքը տնօրինում են ըստ վարձակալության պայմանագրի և նրանք չեն կարող թույլ չտալ կառավարության որոշմամբ նախատեսված և ազգային պարկի կողմից նախաձեռնած պետական նշանակության ծրագրի իրականացումը: Նրանք կարող են փոխհատուցում պահանջել իրենց բարելավումների համար, դա իենց իրավունքն է: Անհրաժեշտ կլինի պայմանավորվել, բանակցել, բացատրել և այլն:</p>	<p>Վարեն Բաբայան - Ամեն դեպքում, երբ մեզ մոտ կլինի նախագիծը, մենք կհասկանանք, ինչ տարածքների հետ գործ ունենք:</p>
<p>Դավիթ Ավետիսյան - Վարձակալների հետ աշխատանքները պետք է իրականացնի ազգային պարկը:</p>	<p>Մարտիրոս Նալբանդյան - Այնուհետև Գազպրոմը կորոշի, թե որ հատվածներում խողովակների ապամոնտաժման ինչպիսի լուծումներ կկիրառվեն :</p>

Վերջում համայնքի ղեկավարն ամփոփեց հանդիպումը՝ նշելով որ համայնքը դեմ չի ապամոնտաժման աշխատանքների իրականացմանը, հաշվի առնելով նաև որ աշխատանքների բնապահպանական ազդեցությունները կմեղմվեն և պայմանավորվածություններ ձեռք կբերվեն վարձակալների հետ:


Քննարկումների վարող՝

<<Ի ՄԻ Ի Քաուբազուս>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ  Մ. Նալբանդյան


Քննարկումների արձանագրող՝

<<Ի ՄԻ Ի Քաուբազուս>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ  Մ. Վարդանյան

Քննարկումների պատասխանատուի ներկայացուցիչ՝

Շողակաթ համայնքի ղեկավար՝  Մ. Շուշանյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝

<<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ի
Սևանի ԳԳՄ-ի ՇՏԲ ճարտարագետ՝  Ա. Սուրբայան



Մասնակիցների ցանկ

2020թ-ի հուլիսի 22-ին ժամը 11:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի (Կենտրոնը՝ Շորձա) համայնքապետարանում նախատեսված «Ծովագյուղի ԳԲԿ-Ճամբարակ» ստորգետնյա միջին ճնշման d 300 մմ չգործող գազատարի ապամոնտաժում» նախագծի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների (1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	Մուրադյան Զարգուհյուհի	«ԱՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»	093131473	
2.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	096588830	
3.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	094001098	
4.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	072202328	
5.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	072154080	
6.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	093-59-02-78	
7.	Մարտիրոսյան Գևորգ	«ՇՈՂԱԿԱԹԻ ԳԲԿ-ՃԱՄԲԱՐԱԿ»	093497792	
8.				
9.				
10.				
11.				
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				

Հավելված 4. ՏԻՄ նախնական համաձայնության գրություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՂԱԿԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի

Շողակաթ համայնք, հասցև՝ գ.Շողակաթ 2-րդ փ. 1/1

հեռ. 093493792, էլ. փոստ՝ shorzha.gegharquniq@mta.gov.am

N227

« 22 » _____ 07 _____ 2020թ.

**«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ –Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԿԱՐ
ՊԵՐՈՆ Տ. ԿԱՐԱՊՏՅԱՆԻՆ**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի համայնքապետարանը տալիս է իր նախնական համաձայնությունը «Շովազյուղի ԳԲԿ-Ճամբարակ » ստորգետնյա միջին ճնշման ժպ300մմ չգործող գազատարի ապամոնտաժման աշխատանքների իրականացմանը :



Համայնքի ղեկավար

[Signature] Ս.Շուշանյան

Հավելված 5. Տարածքի իրադրային սխեմա

